

Գեղամ Մ. Բաղայան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Մաս հինգերորդ: Բիթլիսի նահանգի Մշո գավառը*

Բանալի բառեր – Տարոն, Մուշ քաղաք, Չխուր-Չուխուր, Զիարեթ-Խանդրեզ, Աղջան-Քոսուր, Սուրբ Կարապետ, Սրբոց Առաքելոց, Եղրդուտի Սուրբ Հովհաննես, Հավատամքի լեռներ, Սեռոբովի լեռներ, Սեղանսար, Բաղլուի մելիքություն:

Բիթլիսի (Բաղեշ) նահանգը ձևավորվել է 1879-1880 թթ.՝ օսմանյան կառավարության կողմից Վանի և Դիարբեքիի նահանգներից առանձնացված մասերից:

Սակայն նահանգի սահմանները և ներքին վարչական բաժանումն իրենց վերջնական տեսքն են ստացել միայն 1888-1889 թթ., երբ Բիթլիսի նահանգապետի (թրք. vali) իրավասությանը հանձնվեց հայահոծ Մշո սանջակը (ընդգրկում էր Մուշ-Տարոնը, Բուլանուխը, Մանազկերտը, Խլաթը): Սրանով արհեստականորեն իջեցվում էր ո՛չ միայն հիմնականում հայաբնակ Վանի, այլև նորաստեղծ Բիթլիսի նահանգի հայ բնակչության տեսակարար կշիռը:

Հետայդու Բիթլիսի (Բաղեշ) նահանգի սահմանները փոփոխություններ չեն կրել: Այն հյուսիսից սահմանակից էր Էրզրումի, արևելքից՝ Վանի (հիմնականում՝ լճի հայելիով), իսկ հարավից և արևմուտքից՝ Դիարբեքիի նահանգներին: Առաջին աշխարհամարտի նախօրեին Բիթլիսի նահանգը զբաղեցնում էր շուրջ 28000 քառ. կմ տարածք: Ըստ պաշտոնական վարչական բաժանման, այն կազմված էր 4 սանջակից՝ Բիթլիսի (Կենտրոնական), Մուշի, Գենջի և Սղերդի, որոնք ունեին հետևյալ ներքին կառուցվածքը:

Բիթլիսի կամ Բաղեշի սանջակ. կենտրոնը՝ համանուն քաղաք, որը նահանգապետի նստավայրն էր: Գավառները (թրք. kaza).

Ը (ԺԳ) փայրի, թիվ 2 (54) ասպիլ-հանիս, 2016

ՎԼՎ համահայկական հանդես

* Ընդունվել է տպագրության 5.06.2016:

ա. **Կենտրոնական**. ուներ 3 գյուղախումբ՝ նահանգապետի անմիջական ենթակայության ներքո:

բ. **Խլաթի** կամ **Ախլաթի** գավառ, ուներ 1 գյուղախումբ. կենտրոնը՝ համանուն գյուղաքաղաք,

գ. **Խիզանի** գավառ. ուներ 2 գյուղախումբ, կենտրոնը՝ **Կարասու (Խիզան)** գյուղ:

դ. **Մոտկանի** գավառ. ուներ 1 գյուղախումբ, կենտրոնը՝ **Դատվան** գյուղ:

Մուշի սանջակ. կենտրոնը՝ համանուն քաղաք: Գավառները.

ա. **Մշո (Կենտրոնական)** գավառ. ուներ 4 գյուղախումբ՝ գավառապետի անմիջական ենթակայության ներքո,

բ. **Բուլանուխի** գավառ. ուներ 1 գյուղախումբ, կենտրոնը՝ **Կոփ (Կողբ)** գյուղաքաղաք,

գ. **Մանազկերտի** գավառ. ուներ 2 գյուղախումբ, կենտրոնը՝ **Մանազկերտ (Բերդ)** ավան,

դ. **Սասունի** գավառ. ուներ 1 գյուղախումբ, կենտրոնը՝ **Խաբլջոզ (Սասուն)** ավան,

ե. **Վարդոյի (Վարդով)** գավառ. ուներ 2 գյուղախումբ, կենտրոնը՝ **Գյումգյում** ավան,

Գենջի սանջակ. կենտրոնը՝ **Արդուշեն** կամ **Արշեն** ավան: Գավառները.

ա. **Կենտրոնական**. ուներ 3 գյուղախումբ՝ գավառապետի անմիջական ենթակայության ներքո,

բ. **Ճապաղջրի** գավառ. ուներ 1 գյուղախումբ, կենտրոնը՝ **Ճապաղջուր** կամ **Չևիկ** ավան,

գ. **Խուլփի (Կողբ)** գավառ. ուներ 1 գյուղախումբ, կենտրոնը՝ **Փասուր** ավան:

Սղերդի սանջակ. կենտրոնը՝ համանուն քաղաք: Գավառները.

ա. **Կենտրոնական**. ուներ 1 գյուղախումբ՝ գավառապետի անմիջական ենթակայության ներքո,

բ. **Արվախի** կամ **Էրուհի** գավառ. ուներ 3 գյուղախումբ, կենտրոնը՝ **Դեհ (Տրհ)** ավան:

բ. **Բարվարիի** գավառ. կենտրոնը՝ **Խասխեյր** կամ **Խըսխեյր** գյուղ:

գ. **Խարզանի (Ղարզանի)** գավառ. ուներ 3 գյուղախումբ, կենտրոնը՝ **Ջոխ** գ-քաղաք:

դ. **Շիրվանի** գավառ. ուներ 3 գյուղախումբ, կենտրոնը՝ **Քուֆրա (Քֆրա)** գյուղ:

Վիճակագրական այլևայլ տվյալների համադրումը ցույց է տալիս, որ Արևմտյան Հայաստանի առավել հայաշատ կուսակալությունը եղել է հենց Բիթլիսի նահանգը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին այստեղ հայերը կազմում էին բնակչության շուրջ 51 %-ը կամ 255000-260000 մարդ: Մյուս ազգություններից ամենաբազմամարդը քրդերն էին՝ շուրջ 180000 մարդ: Նահանգում ապրել են նաև թուրքեր (հիմնականում՝ քրդական ծագումով), ասորիներ, եզդիներ, դմլիկներ (գազա), կովկասյան լեռնականներ (չեչեններ, մահմեդական օսեր, դադստանցիներ): Հայ բնակչու-

1 Թուրքական պաշտոնական վավերագրերը բոլոր կովկասցիներին կոչում են «չերքեզ» հավաքական

թյան հիմնական մասը կենտրոնացած էր Մուշի և Բիթլիսի (Բաղեշ) սանջակներում: Ընդ որում նահանգի հայության շուրջ 37 %-ը (ավելի քան 95000 մարդ) ապրում էր Մշո գավառում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ նպատակահարմար գտանք այն ներկայացնել առանձին հոդվածով:

Բնակավայրերի ցանկերը կազմելիս օգտվել ենք ինչպես հայերեն և օտարալեզու տպագիր, այնպես էլ անտիպ (արխիվային) վավերագրերից: Այս տեսանկյունից հատկապես կարևոր են 1912-1914 թթ. կազմված վիճակագրական նյութերը: Մանրամասնությամբ և բավականին բարձր հավաստիությամբ աչքի է ընկնում Մշո առաջնորդարանի նախկին քարտուղար, իսկ 1914-1915 թթ. Սասունի գավառի ելևնոից վարչության գանձապահ (թրք. sandık emini) **Նագարեթ Մարտիրոսյանի** վիճակագրությունը²:

Ուշագրավ տվյալներ են հանդիպում գերազանցապես ուսուցիչների ուժերով 1914 թ. կազմված «դպրոցական» վիճակագրության մեջ, որի՝ Փարիզի **Նուպարյան ազգային գրադարանում** պահվող նյութերը հրատարակել է ֆրանսահայ ուսումնասիրող **Ռայմոնդ (Հարություն) Գևորգյանը**: Այս վիճակագրության տվյալները հանդիպում են նաև Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվում գտնվող ՀՅԴ ականավոր գործիչ **Ռուբենի (Մ. Տեր-Մինասյան)** կազմած անտիպ ցուցակներում³: Ռուբենի նյութերն առաջինը հրատարակել և շրջանառության մեջ է դրել անվանի բանասեր, պատմաբան **Վարդան Պետոյանը**⁴:

Մշո գավառի հայ և օտար բնակչության վերաբերյալ հարուստ տեղեկություններ են հանդիպում նաև **Միսակ և Սեդրակ Բդեյան** եղբայրների հայտնի գործում⁵: Ընդ որում նույն տվյալները զետեղված են **Թեոդիկի (Թեոդորոս Լապճինձյան)** երկում (որոշակի մանրամասներով), որից պարզվում է, որ դրանք հաղորդել է Մուշ քաղաքի Եղեռնը վերապրած միակ քահանա **Եղիշե Տեր-Պարսամյանը**⁶: 1914-1915 թթ. գավառի վիճակագրական իրավիճակը զգալիորեն պարզաբանում են ցեղասպանությունը վերապրած ականատեսների վկայությունները, որոնք հրատարակվել են

անունով, քանի որ 19-րդ դ. 50-60-ական թթ. Կովկասից Օսմանյան կայսրություն տեղափոխված լեռնականների մեջ գերակշիռ մեծամասնությունը կազմում էին չերքեզները և նրանց ազգակից աղբղեացիները:

2 Տե՛ս «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, N 12, էջ 8-9: Հմնտ. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 397 (Գևորգ Մեարոպի), ցուցակ 1, գործ 1, թերթ 11-12: Ի դեպ, Ն. Մարտիրոսյանը ժամանակագրորեն մի փոքր ավելի վաղ թվագրվող (1904-1908 թթ.) վիճակագրական մեծաթիվ նյութեր է տրամադրել նշանավոր հրատարակախոս, պատմաբան և վիճակագիր Ա-Գոյին, որոնց մի մասը վերջինս հրատարակել է իր «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» հայտնի գրքում (Եր., 1912, էջ 98-118):

3 Տե՛ս Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman a la veille du Genocide*, Paris, 1992, pp. 477-490. «Վիճակագրություն Մուշ-Սասունի (քաղաք Մշոյ դաշտի դպրոցական վիճակագրությունից, դարձրեցական) վերատեսուչ Ռուբենի, [1914, Մայիս 1]»: - Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվ, գ. 145, թթ. 1-5:

4 Տե՛ս Պետոյան Վ., Սասունի բարբառը, Եր., 1954: Հմնտ. նույն հեղինակի «Սասունի և Տարոնի պատմա-աշխարհագրական տեղադրությունը» (Եր., 2005): Վերջին աշխատությունը տեղեկություններ է պարունակում նաև նշված երկրամասերի պատմական հուշարձանների և այլ տեղավայրերի մասին:

5 Տե՛ս Բդեյան Ս. և Մ., Հարազատ պատմություն Տարոնոյ, Գահիրե, 1962, էջ 84-90 (Մուշ քաղաքի համար էջ 380-382):

6 Տե՛ս Թեոդիկ, Գողգոթա Հայ հոգևորականութեան և իր հօտին աղէտակի 1915 տարիին, Թեհրան, 2014, էջ 98-125:

Հայաստանի **Ազգային արխիվի** կողմից⁷: Ժողովածուն պարունակում է նաև ուշագրավ, իսկ հաճախ՝ եզակի տեղեկություններ գավառի այլևայլ բնակավայրերի եկեղեցիների, ուխտատեղիների, պահվող ձեռագրերի վերաբերյալ:

Ինչպես մեր հոդվածաշարի՝ Արևմտյան Հայաստանին նվիրված նախորդ մասերում, ներկա հրապարակման մեջ ևս կարևոր տեղ են զբաղեցնում գավառի վանքերը, եկեղեցիները (գործող և ամայի կամ ավերակ), ուխտատեղիները, ձեռագրական հավաքածուները: Այս հարցում մեր աղբյուրներից թերևս գլխավորը **Արիստակես** վարդապետ **Տևկանցի** աշխատությունն է, ուր հանդիպում է գավառի հայկական գործող եկեղեցիների մեզ հայտնի առավել ամբողջական ցանկը⁸:

Գոյություն ունեն նաև մի շարք այլ՝ շահեկան տեղեկություններ հաղորդող սկզբնաղբյուրներ: Առանձնացնել է պետք հատկապես Թիֆլիսի «**Լումայ**» ամսագրում լույս տեսած «**Մշոյ աշխարհ**» հոդվածաշարը⁹, ուր ներկայացվում է Մշո սանջակը 1870-ական թթ. վերջին-1880-ական թթ. սկզբին: Թեև նշված գործն անստորագիր է, սակայն կարելի է ենթադրել, որ հեղինակը **Գարեգին Տրվանձտյանցն** է, որը նշված ժամանակամիջոցում վարում էր **Տարոնի թեմի** առաջնորդի և **Սուրբ Կարապետի** վանահոր պաշտոնները: Բացառիկ հարուստ և հազվագյուտ տեղեկություններ է հաղորդում արևմտահայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, գրող **Գեղամ Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ)**՝ հայրենի բնօրրանին նվիրված իր հիանալի հոդվածաշարերում, որոնք 20-րդ դ. սկզբին հրատարակվել են տարբեր պարբերականներում: Հեղինակի տեղեկությունները հատկապես շահեկան են Տարոնի հռչակավոր մենաստանների ուսումնասիրության համար: Առանձնակի կարևորություն ունեն նաև Մշո և շրջակա մի շարք գավառների տարածքում հանդիպող կիսավեր կամ ավերակ («շաբաթացյալ») մենաստանների մասին **Գ. Տեր-Կարապետյանի** հաղորդած տեղեկությունները: Հայրենանվեր ստավորականի հոդվածներն ի մի է բերել և առանձին գրքով հրատարակել է բանասեր Հակոբ Պետրոսյանը¹⁰:

Այս հարցի վերաբերյալ ուշագրավ նյութեր կան նաև **Համազասպ Ոսկյանի** Հայոց վանքերին նվիրված մատենաշարի Տարոն աշխարհի մե-

7 Տե՛ս «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ», փաստաթղթերի ժողովածու, հատոր 2 (Բիթլիսի նահանգ), Եր., 2012:

8 Տե՛ս **Տևկանց Ա.**, Այցելություն ի Հայաստան: 1878 թ., ձեռագիրը պատրաստել և ծանոթագրել է **Հ. Մ. Պողոսյանը**, Եր., 1985, էջ 48-67: Հաշվի առնելով, որ նշված հրատարակության մեջ Տևկանցի աշխատությունն ամբողջովին չի ընդգրկված, օգտագործել ենք նաև հեղինակի ձեռագիրը. տե՛ս **Մաշտոցյան Մատենադարան, Զանազան հեղինակների ֆոնդ**, թղթապանակ 54, վավերագիր 13-5: Այս գործի ամփոփիչ ցուցակները (ցավոք՝ թերի) պահվում են՝ **Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ)**, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին III, գ. 49: Ընդ որում, Ա. Տևկանցի աշխատությունից Մշո գավառին նվիրված հատվածներ են տպագրվել դեռ «**Արձագանք**» թերթի 1882 թ. N 1-3-ում՝ Հին-Մշեցի ստորագրությամբ:

9 Օգտագործել ենք հանդեսի հետևյալ համարները. 1897 թ.՝ գիրք Ա, էջ 137-18; գիրք Բ, էջ 123-160: 1898 թ.՝ գիրք Բ, էջ 131-153: 1899 թ.՝ գիրք Ա, էջ 107-149:

10 Տե՛ս **Գեղամ Տեր Կարապետյան (Մշո Գեղամ)**, Տարոնի վանքերը: Ուղևորի յիշատակներ, Եր., 2003: Ցավոք, այս հայրենասեր գործչի թողած հսկա արխիվը, որը պահվում է Բեյրութի (Լիբանան) Համազգայինի Մելանքթոն և Արսլանյան ճեմարանում, առ այսօր ամբողջությամբ չի ուսումնասիրվել, որի հետևանքով շատ ուշագրավ նյութեր դեռևս անհայտ են:

նաստաններին նվիրված հատորում¹¹: Հարցին վերաբերող այլ աղբյուրներից կցանկանայինք առանձնացնել նաև Կ. Պոլսի **Սուրբ-Փրկչան** հիվանդանոցի 20-րդ դարասկզբին հրատարակված օրացույցի պրակներում զետեղված, ինչպես նաև Առաջին աշխարհամարտի նախօրեին օսմանյան ՆԳ նախարարություն ներկայացված հայկական վանքերի և եկեղեցիների ցուցակները, որոնք, սակայն, թերի են և ոչ ամբողջական¹²: Այս հարցի կապակցությամբ կցանկանայինք մի փոքր պարզաբանում տալ: Հայկական գործող եկեղեցիների մեզ հայտնի ցուցակներում երբեմն հանդիպում են իրար հակասող տվյալներ, հատկապես նույն գյուղի սրբավայրերի անուններում: Նման դեպքերում, հնարավոր սխալից խուսափելու համար, եկեղեցու անունը տվել ենք կրկնակ ձևերով:

Մշո գավառի մասին հարուստ նյութ է պահպանվել նաև ժուսական աղբյուրներում: Այս շարքում առանձնահատուկ տեղ ունեն 19-րդ դ. վերջին Վանում Ռուսաստանյան կայսրության փոխհյուպատոսներ **Ա.Մ. Կոլյուբակին**¹³ և **Վ. Տ. Մայևսկոյ**¹⁴ աշխատությունները: Այս հեղինակների տվյալները որպես կանոն ընկած են ժուսական հետագա հրատարակությունների հիմքում: Ավելացնենք, որ 19-րդ դարավերջին ցարական կառավարությունը որդեգրել էր Արևմտյան Հայաստանում առաջարկվող բարեփոխությունները բոլոր միջոցներով տապալելու քաղաքականություն, որի առավել կարևոր «հիմնավորումներից» պետք է լիներ հայերի իբր ցածր տեսակարար կշիռը: Այս տեսանկյունից վերոհիշյալ հեղինակների աշխատությունները բացառություն չեն կազմում: Սակայն Մշո գավառի, ինչպես նաև Վանի, Բիթլիսի և որոշ վարչամիավորների պարագայում մենք տեսնում ենք լրիվ հակառակը¹⁵:

Մշո գավառի հետ միասին ներկա հրապարակման մեջ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացրել նաև Բիթլիսի Կենտրոնական գավառի կազմի մեջ ընդգրկված **Վերին Չխուրի** գյուղախմբի (պաշտոնապես՝ Norşin Nahiyesi) հայաբնակ գյուղերը, որով ամբողջանում է պատմական Տարոնը: Ցուցակները կազմելիս պահպանել ենք այն սկզբունքները,

11 Տե՛ս «Տարոն-Տուրուբերանի վանքերը», գրեթ դկտր. Հ. Համազասպ Ոսկեան Մխիթարեան ուխտէն, Վիեննա, 1953:

12 Տե՛ս «Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց», 1903, 1904: «Էջմիածին», Սբ Էջմիածին, 1965, թիվ Բ-Գ-Դ, էջ 182-183: Առանձին դեպքերում օգտագործել ենք **Ղ. Ինձիճյանի** հայտնի աշխատության տվյալները: Ընդ որում, Մշո գավառի առաջին, բավական մանրամասն գյուղացուցակը պահպանվել է հենց նրա մոտ. տե՛ս **Ինձիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Առաջին: Ասիա, հատ. Ա, Վէնէտիկ-Սբ Ղազար, 1804, էջ 180-199: Որոշ հետաքրքիր նյութեր ենք քաղել նաև Կ. Պոլսի **Ստեփանոս Բ «Աղավնի» Զարարյան** պատրիարքի նախաձեռնությամբ 1834 թ. կազմակերպված առաջին թեմական հաշվառումից. տե՛ս **ԳԱԹ, Թ. Ազատյանի** ֆ., բաժին IV, գ. 224, թթ. 152, 154:

13 Տե՛ս **Колобакин А. М.**, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, том VIII, часть II, Тифлис, 1890.

14 Տե՛ս **Маевский В. Т.**, Ванский вилает. Военно-статистическое описание, Т., 1901. Հեղինակը գրքում զետեղել է Վանի հահանգին սահմանակից Բիթլիսի որոշ գավառների, աղ թվում՝ Մուշի, անձամբ իր կողմից հավաքած նյութերը: Իր «**Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов**» (Т., 1904) գրքում արդեն, Վ. Տ. Մայևսկին Մշո գավառի բնակչության վերաբերյալ հաշվարկները նույնությամբ վերցրել է Ա. Մ. Կոլյուբակինից:

15 Ի դեպ, նույնն ենք հանդիպում նաև օսմանյան վիճակագրությունում, որը, ոչ մեկի համար գաղտնիք չէ, այս հարցում միտումնավոր կերպով և հրեշավոր չափերով խեղաթյուրված էր: Ի հեճուկս թուրքական իշխանությունների, Մշո գավառն այնքան հայահոծ էր, որ պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում հայերը մշտապես ցույց են տրված որպես մեծամասնություն:

որոնք կիրառել ենք նախորդ հոդվածներում:

Ելնելով այն հանգամանքից, որ Մշո գավառում են գտնվել համահայկական հռչակ ունեցող 3 մենաստաններ՝ **Սուրբ Կարապետը**, **Սրբոց Առաքելոցը** և **Եղրդուտի Սուրբ Հովհաննեսը**, վերջիններիս անդրադարձել ենք առանձին ենթաբաժիններով:

Ա) Մուշ քաղաք

Գտնվում էր Մշո դաշտի հարավ-արևմտյան մասում՝ **Միմ** կամ **Կուրտիկ** լեռնագագաթի (2729մ) հյուսիսային լանջերի դարավանդներով իջնող **Երաշխավորի (Սբ Աստվածածնի)** կամ **Գառնենի** և **Մշո** գետակների միջնահովիտներում փոված գոգավորությունում: Քաղաքից շուրջ 6 կմ հյուսիս հոսում է **Մեղրագետը**: Շրջակա տեղանքի շնորհիվ Մուշն ուներ յուրատեսակ բնական սահմաններ: Հարավից քաղաքը եզերում էին **Էրուխաչի**, **Կորեկաղբբան** և **Միմի (Կուրտիկ)** բարձունքները՝ շրջապատված **Արջգլորի**, **Երաշխավորի (Սբ Աստվածածին)**, **Սաչքի** և **Տափքի** սարավանդներով: Քաղաքի արևմուտքում ձգվում էին **Գառնենի** և **Ջրիկի** բլրաշարքերը, իսկ հյուսիսային և արևելյան հատվածներում արդեն Մշո դաշտն էր: Սանջակի կենտրոն լինելուց բացի՝ Մուշը նաև հայ եկեղեցու **Տարոնի** թեմի առաջնորդանիստն էր: 1914 թ. քաղաքի բնակչությունն անցնում էր 30000-ից, որից հայերի թիվը կազմում էր 12500-13000 մարդ (ի դեպ՝ գոյություն ունի նաև ավելի բարձր ցուցանիշ՝ 15000 մարդ): Մահմեդական բնակչության հիմնական մասը կազմում էին գերագանցապես քրդական ծագում ունեցող թուրքերը (շուրջ 18000 մարդ), որոնք բնակվում էին **Բերդի** (թրք. Kale mahallesi), **Դաշ (Քարի)**, **Դուզ (Դաշտի)**, թրք. Düz mahallesi), **Խուրդենց**, **Մինարա**, **Ներքին** (թրք. Süfle mahallesi) և **Քոթանենց** կամ **Քոթան** թաղերում: Հայաբնակ էին քաղաքի հարավային և արևմտյան մասերը զբաղեցնող հետևյալ 5 թաղերը.

ա) **Վերին թաղ**. Եկեղեցին՝ **Սուրբ Հարություն**, ուր պահվող 14 ձեռագիր մատյաններից մեծ հռչակ էր վայելում սրբացված (ժողովրդի շրջանում «հրաշագործ» համբավով) «**Սև Ավետարանը**»: Թաղային դպրոցի աշակերտների թիվը 1914 թ. կազմում էր 170-200 երեխա: **Վերին թաղում** հայտնի էր «**Խաթուն-Ջերմուկ**» ուխտավայրը, ուր հաճախում էին հիմնականում տարեց կանայք:

բ) **Ձորի թաղ (Ձորոթաղ)**. Եկեղեցին՝ **Սուրբ Աստվածածին**, ուր պահվող 8 ձեռագրերից նշանավոր էր դարձյալ «հրաշագործ» համարվող «Շեկ **Ավետարանը**»: Եկեղեցուն կից գտնվում էր դեռ 1880-ական թթ. Կ. Պոլսի **Միացյալ ընկերության** կողմից հիմնված երկհարկանի **Կեղրոնական** վարժարանը (1914 թ. շուրջ 250 աշակերտ): Բացի այդ՝ թաղային դպրոցում սովորում էր 180 երեխա: **Ձորի թաղում** հայտնի ուխտատեղի էր **Սուրբ Աստվածածին** մատուռը:

գ) **Սուրբ Մարինե (Մարիանե)** կամ **Չաղարթաղ**. Եկեղեցին՝ **Սուրբ Մարինե** (առաջնորդանիստ մայր եկեղեցի), ուր պահվում էր 7 ձեռագիր մատյան: Կից գտնվում էր Տարոնի առաջնորդարանի շենքը: Կար թաղային 2 դպրոց՝ տղաների (1914 թ. շուրջ 170 աշակերտ) և աղջիկների կամ

օրիորդաց վարժարան (1914 թ. 250 աշակերտուհի): **Սուրբ Մարինեում** էր գտնվում նաև Տարոնի հայ կաթողիկե համայնքի կենտրոնը՝ **Սուրբ Աստվածածին** եկեղեցին՝ կից դպրոցով (1914 թ.՝ 80 աշակերտ):

դ) **Բրուտի կամ Բրուտի թաղ**. եկեղեցին՝ **Սուրբ Մարգիս**, ուր պահվող ձեռագրերի թիվը 10 էր: Եկեղեցուն կից պահպանվել էր գետնափոր մատուռ՝ հնագույն խաչքարերով: Թաղային դպրոցում 1914 թ. սովորում էր 80 աշակերտ:

ե) **Ջիգրաշեն**. եկեղեցին՝ **Սուրբ Կիրակոս**, ուր պահվում էր 8 ձեռագիր մատյան: Թաղային դպրոցում սովորող աշակերտների թիվը 1914 թ. հասնում էր 60-ի:

Մուշում առանձին դպրոց ուներ նաև փոքրաթիվ հայ բողոքական համայնքը՝ 1914 թ. շուրջ 60 աշակերտներով: Փաստորեն քաղաքում գործում էին հայկական 6 եկեղեցի և 9 դպրոց (ընդհանուր՝ ավելի քան 1300 աշակերտ): Քաղաքի եկեղեցիներում պահվող հայերեն ձեռագրերի թիվը 47 էր: Հայերը հիմնականում զբաղվում էին արհեստներով (բրուտագործություն, կոշկակարություն, վերջինիս մի տարատեսակը՝ կոնդուրաչխություն, դարբնություն, ներկարարություն, ոսկերչություն ևն), ինչպես նաև առևտրով: Բավական է նշել, որ շուկայի 800 խանութներից և կրպակներից 500-ը պատկանում էր հայերին:

Մուշում և նրա անմիջական շրջակայքում պահպանվել էին մի շարք պատմական հուշարձաններ: Քաղաքի հարավում խոյացող բարձունքին երևում էր Մամիկոնյանների «ամառանոցային» կիսաքանդ հինավուրց ամրոցը, որը ժողովուրդը կոչում էր «**Մուշեղի բերդ**»: Բերդի թաղում պահպանվել էին **Մշո բերդի** ավերակները: Մուշի շուկային կից գտնվող **Ուլուջամի** մզկիթն ավանդաբար նույնացվում էր պատմիչ **Թովմա Արծրունու** կողմից հիշվող **Սուրբ Փրկիչ** եկեղեցու հետ, ուր 852 թ. խութեցի ապստամբները հաշվեհարդար տեսան Տարոնը պատուհասած արաբ զորավար Յուսուֆի (Յուսուփ) հետ:

1915 թ., չենթարկվելով թուրքական իշխանությունների բռնազաղթի հրամանին, Մուշ քաղաքի հայերը, որոնց միացել էին նաև հարևան գյուղերից տեղափոխված շուրջ 10000 հայրենակիցներ, փորձված հայդուկ **Հակոբ Հաջի Կոտոյանի (Կոտոյի Հաջի)** ղեկավարությամբ հունիսի 28-30-ին եռօրյա հերոսական գոյամարտ մղեցին ջարդարարների դեմ: Գերմանական հրետանավոր սպաների կողմից ուղղորդված հրետակոծությամբ քաղաքի հայկական թաղամասերը հիմնովին ավերվեցին, իսկ տների փլատակների տակ մնացին ինչպես պաշտպանները, այնպես էլ խաղաղ բնակչության մեծագույն մասը: Բացի այդ՝ Մուշի առանձին թաղերում թուրքերի ձեռքն ընկած մի քանի հազար կանայք և երեխաներ վայրագաբար ողջակիզվեցին: Քաղաքացի հայերից մագապուրծ փրկվեցին ընդամենը 600-700 մարդ: 1916 թ. փետրվարին, երբ ռուսական զորքերը գրավեցին Մուշը, վերապրած հայերի խլյակները սկսեցին աստիճանաբար հավաքվել ավերակույտերի վերածված քաղաքում: Մակայն 1918 թ. սկզբին օսմանյան բանակի վերսկսած հարձակումը ստիպեց մշեցի հայերին իրենց գավառացի հայրենակիցների հետ նորանոր կորուստներով հեռանալ բնօրրանից:

Բ) Մշո գավառ

Գրավում էր Բիթլիսի (Բաղեշ) նահանգի կենտրոնական հատվածը՝ **Արածանիի (Մուրատ)** գետի միջին հովտում: Սահմանակից էր հարավից, **Հայկական Տավրոսի** միջնամասը կազմող **Սիմ** (նաև՝ **Խաչառաջ**) և **Խուրթի** լեռներով՝ **Սասունի** պատմաաշխարհագրական մարզին, արևելքից, **Մշո** կամ **Չխուրաշամբ** ճահճուտների շրջանով (պատմական **Մեծամոր** <Մեծամար) և **Խլարթի** լեռներով՝ **Բիթլիսի (Բաղեշ) Կենտրոնական** սանջակին, հյուսիս-արևելքից, **Սեղանսարի** լեռնապարով (քրդ., թրք. Kösür)՝ **Բուլանուխին**, հյուսիսից՝ **Արածանու** հունով, իսկ հյուսիս-արևմուտքից՝ **Հավատամքի** լեռներով (թրք. Şerafettin Dağları)՝ **Վարդոյին**, արևմուտքից, **Սեռորովի** լեռնաշղթայով՝ **Գենջի (Կինճ)** սանջակին: Տարածքի հիմնական մասը զբաղեցնում էր **Մշո** կամ **Տարոնի** հոչակավոր դաշտը:

Օսմանյան վարչական բաժանումով Մշո գավառը, որը համապատասխանում էր պատմական Տարոնի մեծագույն մասին, ներառված էր համանուն սանջակի կազմում և գտնվում էր գավառապետ-մութասարիֆի (թրք. mutasarrif) անմիջական ենթակայության ներքո: 20-րդ դարասկզբին գավառն ուներ ըստ գյուղախմբերի (թրք. nahiyе) հետաքրքիր ներքին բաժանում, որոնք ժողովրդի շրջանում հայտնի էին «կոլ» ձևով (թրք. kol-«թև», «ձեռք», հետնաբար՝ «կողմ», «շրջան», հմմտ. հայերեն բրբռ. «ղօլ»): Այդ գյուղախումբ-«կոլերը» հետևյալն էին.

ա. **Կենտրոն** (թրք. Mus-Merkezi). Մուշ քաղաքի շրջակա բնակավայրերը, որոնք սփռված էին Մեղրագետից հարավ, ինչպես նաև Մշո գավառի հարավ-արևմուտքում ընկած **Սուրբ Հովհաննեսի (Եղրդուտի)** վանքի շրջանը: Գյուղախումբը գտնվում էր գավառապետի անմիջական ենթակայության ներքո:

բ. **Չխուր** կամ **Չուխուր** (թրք. çukur-«փոս», «գոգավորություն», «իջվածք», կոչվում էր նաև՝ Birinci kol, իմա՝ «**Առաջին շրջան**»). գրավում էր Մշո դաշտի արևելյան մասը՝ մինչև **Շամբ-Մեծամոր**: Կենտրոնը **Ավգաղբյուր (Չխուր-Աղգաղբյուր)** գյուղն էր:

գ. **Զիարեթ** կամ **Խանդրեզ** (նաև՝ İkinci kol, իմա՝ «**Երկրորդ շրջան**»). Զբաղեցնում էր գավառի հյուսիս-արևմտյան մասը՝ Արածանուց մինչև **Հավատամքի** և **Սեռորովի** լեռները: Գյուղախմբի մեջ էր ներառված նաև հոչակավոր **Սուրբ Կարապետ** վանքն իր շրջակայքով: Կենտրոնը **Զիարեթ** ավանն էր:

դ. **Աղջան** կամ **Քոսուր**. գրավում էր գավառի ողջ հյուսիսային և արևելյան մասերը: Գյուղախմբի արևմտյան սահմանը կազմում էր **Արածանի-Մուրատի** հունը: Տարածքի հիմնական մասով ձգվում էր **Սեղանսարի (Քոսուր)** լեռնագոտին: Կենտրոնն **Աղջան** ավանն էր՝ պատմական **Ողական** բերդի մոտ:

Պաշտոնական վարչական բաժանման համաձայն, Մշո գավառի կազմի մեջ որպես առանձին գյուղախումբ մտնում էին նաև **Սասունի** հյուսիսային **Շատախ** (այդ թվում՝ **Գեղիեգուզանն** իր «թաղերով») և **Ծովասար** գավառակները (տե՛ս Սասունին նվիրված հոդվածում):

Մուշ-Տարոնն Արևմտյան Հայաստանի այն նշանավոր գավառներից էր,

ուր ընդհուպ մինչև 18-րդ դ. կեսերը պահպանվել էր գրեթե միատարր հայ բնակչություն: Քրդերի ներթափանցումն այստեղ թեև սկսվել էր դեռ զարգացած միջնադարում, սակայն մի քանի հարյուրամյակի ընթացքում էական ազդեցություն չէր ունեցել, քանի որ եկվորները, հիմնականում պահելով իրենց քոչվորական կենցաղը, մշտական զանգվածային բնակչություն չէին կազմում և ընդամենը ներկայացված էին ցեղային ավագանիով: Անշուշտ, դրանում վճռական դեր է խաղացել **Սուրբ Կարապետի** շրջակայքն ընդգրկող **Բաղլուի** (պատմ. **Պարեխ** կամ **Բրեխ**) հայկական կիսանկախ մելիքությունը: Ըստ պահպանված տեղեկությունների՝ տեղի մելիքները դաշնակցային հարաբերությունների մեջ էին գտնվում հարևան **Գենջի** և **Ճապաղջրի** դմիլիական (զազաների) իշխանությունների (հույ՝ յումեթ) հետ՝ իրենց հրամանատարության ներքո ունենալով 500 զինված հեծյալ մարտիկ: Սակայն 18-րդ դ. կեսերից քրդական ներհոսքը նկատելիորեն ուժեղացավ: Այն կապված էր Մշո ազդեցիկ **Ալադին** (**Ալաէդդին**) բեկի կողմից Բիթլիսի (Բաղեշ) քրդական հզոր խանությունից անկախ նոր իշխանության ստեղծման հետ, որի կենտրոնը՝ Մուշ քաղաքին զուգահեռ, 1741 թվականից, դարձել էր Արածանու աջափնյակին կառուցված **Ոսպնբլուր** (թրք. Mercimekkale) բերդավանդ: Քուրդ ավատատերերի միջև սկսված բազմամյա զինված հակամարտությունը հսկայական վնաս հասցրեց Տարոնի հայությանը, ինչի հետևանքով ավերվեցին և անայացան տասնյակ բնակավայրեր: Հենց այս ժամանակից էլ ավելի արագացավ ոչ միայն քրդական ներթափանցումը, այլև հիմնականում՝ գավառի լեռնային հատվածների ամայացած գյուղերում քոչվորների նստակեցության անցնելու գործընթացը: Այս երևույթն առանձնակի մեծ ծավալներ ընդունեց հատկապես 19-րդ դ. առաջին տասնամյակներին: Ընդ որում որոշակի հեռահար նպատակներ հետապնդելով՝ օսմանյան իշխանություններն ամեն կերպ օժանդակում էին քրդական նորանոր ցեղերի (թրք. aşiret) վերաբնակեցումը Տարոնում: Այս ամենը հանգեցրեց **Բաղլուի** հայ մելիքների կատաղի ընդդիմությանը: Քրդերի, մասնավորապես մլանցիների, դեմ պայքարն իր գագաթնակետին հասավ 19-րդ դ. 20-40-ական թթ., երբ համառորեն Տարոն ներթափանցել ձգտող եկվորների դեմ բավականին հաջող կռիվներ էր մղում մելիքության ականավոր ներկայացուցիչ **Կեմիկցի Ալեքսանը**՝ հարևան **Ավրան** ավանի **Տոնիկ Քեհյայի** (գյուղապետ) աջակցությամբ: Սակայն ցեղակիցների աճող ներհոսքը և թուրքական իշխանությունների չդադարող հովանավորությունն օգտագործելով՝ եկվորներն ավերեցին **Բաղլուի** մելիքության բազմաթիվ բնակավայրեր: Խիստ տուժեց նաև **Սուրբ Կարապետի** վանքը, որը, քրդերի կողմից ենթարկվելով վայրագ կողոպուտի, 1820-ական թթ. վերջին՝ որոշակի ժամանակահատվածում, անգամ ամայացավ, իսկ միաբանությունը ցրվեց: Մեծաթիվ զոհերը և տնտեսական քայքայումն ի վերջո դարձան **Բաղլուի** մելիքության անկման պատճառ:

Հայ բնակչության համար նոր ծանր հարված էր ռուս-թուրքական 1828-1829 թթ. պատերազմի ընթացքում մեծ թվով հայերի (ըստ որոշ տվյալների՝ ավելի քան 300 տուն) տեղափոխությունն Արևելյան Հայաստան: 1830-1840-ական թթ. տխրահռչակ «ղշլաղի» համակարգի վերաց-

ման պատրվակով օսմանյան իշխանությունները շարունակեցին քրդերի վերաբնակեցումն ամայացած գյուղերում: Դա մասնավորապես անդառնալի հետևանքներ ունեցավ **Սեղանսարի (Քոսուրի)** շրջանի համար, ուր հայ բնակչությունն արդեն 19-րդ դ. կեսերին գրեթե ամբողջությամբ անհետացել էր: Ի դեպ, դեռ 1860-ական թթ. թուրքերն առաջին փորձերը կատարեցին, Տարոնում վերաբնակեցնելու նաև կովկասցի լեռնականների, մասնավորապես ադրդեացիների (չերքեզների): Սա նույնպես հանդիպեց հայերի ուժեղ դիմադրությանը: Այդ շարժումը **Հավատորիկի** հայերի գլխավորությամբ նախ սկսվեց **Սբ Առաքելոցի** մոտակա գյուղերում, ապա տարածվեց նաև Տարոնի մյուս մասերի գյուղացիության շրջանում: Արդյունքում՝ եկվորները ծանր կորուստներով վտարվեցին գավառից: Սակայն շարժումը սրանով չդադարեց և 1860-ական թթ. սկզբին ուղղվեց նաև քուրդ ցեղապետերի, հետևաբար նաև նրանց հովանավոր օսմանյան իշխանությունների դեմ, որը հայտնի է «Մշո ապստամբություն» անունով: Ցավոք, այս իրադարձության վերաբերյալ շատ բան հայտնի չէ: Ազատագրական այս շարժումը, սակայն, հետագա զարգացում չունեցավ և աստիճանաբար մարեց, իսկ 1877-1878 թթ. հերթական ռուս-թուրքական պատերազմից հետո՝ Աբդուլ Համիդ 2-րդի ահաբեկչական վարչակարգի գործընթացմանը զուգընթաց, Մշո գավառի որոշ բնակավայրերում այնուամենայնիվ հաստատվեցին կովկասցիների (հիմնականում՝ չեչեններ) և կարափափախ թյուրքերի առանձին խմբեր: Օսմանյան տերության նման ժողովրդագրական քաղաքականության հետևանքով 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին Մշո գավառի առանձին, հատկապես սահմանամերձ լեռնային հատվածներում, հայ բնակչության տեսակարար կշիռը նկատելիորեն նվազել էր: Այդուհանդերձ, զինված հերոսական պայքարի շնորհիվ (չմոռանանք, որ 19-րդ դ. 80-ական թվականներից Մուշ-Տարոնը դարձել էր Հայոց ազատագրական շարժման գլխավոր կենտրոններից մեկը), հայությունը շարունակում էր կազմել գավառի բնակչության գերակշիռ մեծամասնությունը: Վերն արդեն նշված 4 գյուղախմբերում, որոնք ունեին 200-210 գյուղական բնակավայր (ներառյալ՝ սակավաբնակ «մեզրե»-ագարակները), 1914 թ. ապրում էր ավելի քան 110000 բնակիչ, որից 80000-83000-ը՝ հայեր էին (72-75 %): Մուշ քաղաքի բնակչության հաշվարկի դեպքում (տե՛ս անդ.) գավառի ողջ բնակչության թիվը կազմում էր ավելի քան 140000 մարդ, որից հայերը՝ շուրջ 95000 (մինչև 68%): Այս առումով Մշո գավառն Արևմտյան Հայաստանի առավել խոշոր (տարածքը՝ շուրջ 4000 քառ. կմ) և հայաշատ վարչամիավորն էր:

Ցավոք, 1915 թ. Տարոնի քաղաքական ղեկավարության դանդաղկոտությունը հնարավորություն չտվեց կազմակերպելու գավառի հայության կենտրոնացված ինքնապաշտպանությունը, որի շնորհիվ դարավոր թշնամուն կարելի էր արժանի հակահարված հասցնել: Հունիս-հուլիս ամիսներին, փաստորեն, անպաշտպան մնացած տարոնահայությունն օսմանյան կանոնավոր բանակային ուժերի և քրդական «համիդիե» ավազակախմբերի կողմից ենթարկվեց հրեշավոր բնաջնջման: Գավառի մի շարք բնակավայրերում հավաքված տասնյակ հազարավոր հայեր արգելափակվեցին տեղի գոմերում կամ մարագներում և ենթարկվեցին ողջակիզման:

Տարոնահայության Holocaust-ի այդպիսի վայրեր դարձան **Ալիզոնան, Ավգադբյուր, Ավզուտ, Ավրան, Արտոնք, Բլել, Երշտեր, Խասագեղ, Խարս, Շելյանք, Ուշտամ (Հուշտամ), Զրիկ, Սոխագոմ** գյուղերը, ինչպես նաև **Սուրբ Կարապետի** շրջակայքը: Սակայն նման դժոխային պայմաններում անգամ Մուշ քաղաքում և գավառի առանձին վայրերում տարոնցիկները հերոսամարտեր մղեց՝ հնարավորինս թանկ վաճառելով կյանքն ու պատիվը: **Ալիջան, Գառնեն, Գոնա, Ավրան** գյուղերի հայերը գենքը ձեռքին մինչև վերջ մարտնչեցին դարավոր ոսոխի դեմ, բայց չհանձնվեցին: **Քանասարում, Մշո շամբում, Հավատամքի** լեռներում ապաստանած հայերը ևս շաբաթներով դիմադրեցին թշնամուն և կարողացան հիմնականում փրկվել: Ողջ Մշո գավառի բազմահազարանոց հայության վերապրածների թիվը հաշվվում է ընդամենը 8000-9000 մարդ...

1916 թ. ռուսական բանակի կողմից Մուշի գրավումը հնարավորություն տվեց տարոնահայության փրկված խյակներին վերադառնալ բնօրրան և հարևան Սասունի՝ դարձյալ ցեղասպանությունը վերապրած հայրենակիցների հետ, լծվել Հայրենիքի վերաշինության նվիրական գործին: Սակայն 1918 թ. օսմանյան բանակի նոր հարձակումը ստիպեց Մշո գավառի հայերին կրկին լքելու սրբազան Տարոնը...

Գ) Մշո գավառի հայկական բնակավայրերը

#	Բնակավայր	Եկեղեցի	Գարոց	Այլ տեղեկություններ
1	Աբլբուհար	Սբ Աստվածածին	1	Գյուղը գտնվում էր Մեղրագետի աջակողմյան համանուն օժանդակի աջ ափին: Մոտակայքում կիսավեր Սբ Գևորգ վանքն էր: Նույն վտակի վերին հոսանքի շրջանում, բայց ձախ ափին գտնվում էր Սիմթորոս < Սուրբ Թորոս երբեմնի հայաբնակ գյուղը, որի մոտակայքում եղել է հայկական վանք, ինչպես երևում է տեղանունից:
2	Ալադին	Սբ. Սարգիս		Կենիկի գյուղակն էր:
3	Ալիգլբոն (Արագլիբոնյա)	Սբ. Աստվածածին (Սբ. Հակոբ), Թուխ Մանուկ	1	
4	Ալիզոնան (Ալիզետնակ, Չեռնակ)	Սբ Հակոբ	1	Հիշվում է նաև Սբ Սարգիս եկեղեցին, որի մասին մանրամասները բացակայում են:
5	Ալիջան	Սբ Աստվածածին	1	Գյուղում եղել է 3 ուխտատեղի:
6	Ավառինջ (Առվալիճ)	Սբ Հակոբ	1	Գյուղի մոտ գտնվում էր ավերակ Կարմիր վանքը : Մշո գավառի բազմամարդ հայաբնակ գյուղերից էր՝ 1914 թ. ավելի քան 1400 հայ բնակչությամբ :
7	Աղբենիս	Սբ Աստվածածին		Եկեղեցին հայտնի ուխտատեղի էր:
8	Աղջան (Ախչան, Ողական)	Սբ Աստվածածին, Սբ Մինաս (երբեմնի վանք)	1	Գյուղում պահվել է ձեռագիր մատյան: Աղջանում կային Թուխ Մանուկ և Սբ Գրիգոր (Գրեսոր) անունով ուխտավայրեր: Մոտակայքում է գտնվել Տարոնի պատմական կենտրոն Ողական (Օղական) ամրոցը, որը ուշ միջնադարում կոչվել է Աղզան (օսմանյան աղբյուրներում՝ Avkhakan): Վերջինիս աղավաղումից էլ առաջացել է գյուղանունը: Աղջանը Մշո գավառի խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. 1900-2000 հայ բնակչով:

9	Առաղ (Առաղս)	Սր Սահակ	1	Մոտակայքում՝ դեպի Ծիրնկատար (Տիրինկատար) լեռնագագաթ երկարող Առղաձորի եզրին էր գտնվում Սրբոց Առաքելոց կամ Սրբոց Թարգմանչաց հռչակավոր մենաստանը (տես իր տեղում): Առաղից հվ պահպանվել էին պատմական Տիրնկատար կամ Տիրակատար բնակավայրի (ըստ տեղացիների՝ «քաղաք») ավերակները: Գյուղում պահպանվել է Վանի թագավորության դարաշրջանի ամրոց: Առաղը Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. 1000–1100 հայ բնակչությամբ:
10	Առինջ	Երեքխորան Սր Աստվածածին (հայ-կաթողիկե)	1	Գյուղը կազմված էր Վերին և Ներքին (« Վարի ») թաղերից: Գյուղը Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. 1200 հայ բնակչությամբ:
11	Առինջվանք	Սր Սարգիս (երբեմնի վանք)	1	
12	Առղա մեզրե (մզրե)			
13	Առնիստ	Սր Հովհաննես (Սր Թորոս)	1	Գյուղում պահվել է ձեռագիր մատյան՝ սրբացված Կարմիր Ավետարանը : Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1000 հայ բնակչով: Հավանաբար Առնիստի հարևանությամբ է գտնվել մինչև 19-րդ դ. սկ. հայաբնակ Ճոռնիստ գյուղը:
14	Ավգուխ (Ավագհող, Սիրոյի գոմեր)			Ավգուխը՝ Բլելի, Գյալախուլի-Հողաբլրի և Տատրագոմի հետ միասին, Սր Հովհաննես վանքի ագարակներն էին:
15	Ավգաղբյուր 1-ին (Չուխուր Ավգաղբյուր)	Սր Աստվածածին	1	Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1000 հայ բնակչությամբ:
16	Ավգաղբյուր 2-րդ	Սր Գևորգ	1	
17	Ավգուտ (Օծուտ-Աւծուտ)	Սր Սարգիս, Սր Սիմեոն	1	Մոտակայքում պահպանվել էին Սր Աստվածածին և Սր Սիոն վանքերի ավերակները: Գյուղից մի փոքր արլ Ավագքիթ վայրում, գտնվում էր մատուռ-ուխտատեղի: Մոտակայքում պահպանվել է Վանի թագավորության դարաշրջանի ամրոց:
18	Ավրան	Սր Հովհաննես, Սր Նիկողոս	1	Ավրանում կար Թուխ Մանուկ ուխտատեղի, ուր երևում էին նաև եկեղեցու մնացորդներ: Ավրանը ոչ միայն Մշո գավառի, այլև Բիթլիսի նահանգի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 3000 հայ բնակիչներով:
19	Արագ	Սր Սարգիս (Սր Հակոբ)	1	
20	Արգավանք (Արքավանք)	Սր Թովմաս Առաքյալ (Թումա Առաքյալ, երբեմնի վանք), Սր Լուսավորիչ, Շեկ Ավետարան	1	Հայտնի էր Սր Աստվածածին վանքը (Արքայից վանք), որը հայտնի ուխտատեղի էր: Գյուղում պահվել է Շեկ Ավետարան ձեռագիրը, որը գտնվում էր նույնանուն սրբատեղիում (տես եկեղեցիների շարքում): Գյուղի շրջակայքում պահպանվել էին ևս 2 մենաստանների ավերակներ:

21	Արթերթ (Արտից գիւղ)	Սբ Սարգիս	1	Գյուղի մոտ է գտնվել հնագույն Արտից բերդը : Արթերթից շուրջ 6 կմ հս-արևելք, Սեղանաարի (Քոսուր) լեռնագոտու ստորոտին գտնվող Զիարեթ կամ Կաղրագոմ գյուղակի շրջակայքում տեսանելի էին Տարոն-Մուշի նշանավոր Տաղոնք (Դաղոնք) հնավայրի ավերակները: 20-րդ դ. սկ. պահպանվել էր Տաղոնաց կամ Դաղոնաց կիսավեր վանքը, ուր գտնվում էր տեղացի հայերի շրջանում որպես սրբատեղի մեծ հարգանք վայելող Սուրբ Տարրոյի շիրիմը: Սա, ըստ էության, Պատմահայր Խորենացու մոտ հանդիպող Նոյի թոռ Տարրանի մասին (Սեմի որդին) հեռավոր վերնուշն էր տարոնցիների մոտ: Չմոռանանք, որ Սովսես Խորենացին Տարոն տեղանունը կապում է հենց Տարրանի անվան հետ (հին հայերեն՝ Տարան): Սրբավայր էր նաև Զիարեթ-Կաղրագոմի ավերակ եկեղեցին: Տաղոնքի շրջակայքում գտնվում էին մի շարք երբեմնի հայկական բնակավայրեր՝ Գոմձոր (թրդ. Qimsoran), Խարդոց (Քուրդ-Խարթոս), Շաշրկան կամ Շրշան ևն:
22	Արտխոնք	Սբ Աստվածածին (Սբ Գևորգ)	1	
23	Արտոնք	Սբ Աստվածածին	1	Շրջակայքում տեսանելի էին սրբավայրերի ավերակներ: Արտոնքը Մշո գավառի բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 1500 հայ բնակչով:
24	Բագու (Բագում)	Սբ Տիրամայր (Սբ Աստվածածին)	1	Տարոնի հնագույն բնակավայրերից էր: Համաձայն Զենոբ Գլակի՝ Բագուն Իննակյան մեհյանի (ուր պահվում էր Գիսանեի կուռքը) հարկատու 12 դաստակերտներից էր: Շրջակայքում պահպանվել էին Բագվաբերդի և Հողեբերդիկ ամրոցի ավերակները:
25	Բաղլու-Մելիք (Պարեխ, Բրեխ)	Սբ Աստվածածին, Սբ Հրեշտակապետ	1	Հիշվում է նաև Սբ Նիկողոս եկեղեցին: Նույնացվում է նշանավոր Իննակյան մեհյանին հարկատու 12 դաստակերտներից Պարեխի (Բրեխ) հետ, որն, ըստ Տարոնի պատմագիր Զենոբ Գլակի , գավառի խոշոր բնակավայրերից էր (չափազանցված տվյալներով՝ 3200 «ծուխ» կամ «երդ»): Պահպանվել էր Բաղլուի ավերակ ամրոցը (Բաղլվաբերդ), որը ժամանակին տեղի հայ մելիքների կենտրոնն էր: Մոտակայքում գտնվում էր Սբ Գևորգ ավերակ վանքը: Բաղլուից հս-արևելք՝ Խազուզեղ երբեմնի հայաբնակ գյուղում (թրդ. Qazian , բրբ. Խազխան) պահպանվել էին բերդի ավերակներ, ինչպես նաև՝ Կարմիր կամ Կարմրո (Քամո) վանքի մնացորդները: Ամրոցի ավերակներ էին պահպանվել նաև Խազուզեղի հարևան Կալաջուղ կամ Խալաջուղ գյուղում ևս (Փողնի , նաև՝ Խալաջրդա բերդ):
26	Բարդիկ (Եկնալ-Բարդիկ)	Սբ Կիրակոս (նախկին վանք)		
27	Բգլից (Բքլիս)	Սբ Գևորգ	1	

28	Բերդակ	Սբ Աստվածածին, Սբ Սարգիս	1	Շրջակայքում էին գտնվում Սբ Կիրակոս (հայտնի ուխտատեղի էր) և Սբ Մինաս կիսավեր վանքերը: Մոտակա Քան (Քանասար) և Բուրգեղ լեռնագագաթներին պահպանվել էին բերդերի ավերակներ:
29	Բլել (Պըլել)	Սբ Սարգիս	1	Սբ Սարգիսը միաժամանակ Սշո հնագույն և հայտնի ուխտատեղիներից էր: Մոտակայքում կար սրբազված ջերմուկ:
30	Բիրզին (Պիրզին)			
31	Բնդըխներ (Պնտըխներ)	Սբ Հարություն	1	Գյուղում կար ավերակ մի եկեղեցի և՝ Սբ Գևորգ անունով: Գյուղից արմ՝ Սինսարի հյուսիսային ճյուղերից մեկի վրա բարձրացող Խուռեղին լեռնագագաթին գտնվում էր Սմբատաբերդը , որը հայտնի էր նաև Մուշեղաբերդ անունով (թրք. Mosihkalesi): Շինությունը վերագրվում էր Սմբատ (Բագրատունի՝) իշխանին:
32	Բոստաբենդ (Բաստավան)	Սբ Աստվածածին	1	Մոտակա Ջաղցրձոր (թրդ.՝ Çaxsor) երբեմնի հայաբնակ գյուղում պահպանվել էր Ձորավանք ավերակ մենաստանը, որը, սակայն, շարունակում էր մնալ տարոնցի հայերի հայտնի ուխտատեղիներից մեկը: Բոստաբենդը Սշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1200 հայ բնակչով: Որոշ աղբյուրներում գյուղը նշվում է Բուլանուխի կազմում, քանի որ գտնվում էր 2 գավառների սահմանագլխին:
33	Բրինոք			
34	Գառնեն (Կառնեն, Գառնի)	Սբ Գևորգ	1	Շրջակայքում պահպանվել էին եկեղեցու (կամ մենաստանի) ավերակներ: Գառնենը Սշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1200 հայ բնակչով:
35	Գյալախուլի (Կյալախուլի, Հողաբլուր՝)			
36	Գոմեր	Սբ Աստվածածին (Սբ Քառասուն Մանկունք)	1	Ուներ Թուխ Մանուկ ուխտատեղի: Մոտակայքում պահպանվել էին ուշագրավ ճարտարապետական ոճով կառուցված վանքի ավերակներ: Գոմերը Սշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. 1100-1200 հայ բնակչով:
37	Գոմս	Սբ Հակոբ	1	Գյուղում կար ավերակ եկեղեցի՝ Սբ Աստվածածին անունով: Հայտնի էր նաև Թուխ Մանուկ ուխտատեղին: Գոմսը Սշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. 1000 հայ բնակչով:
38	Դաշտոք			
39	Դերիկ (Աշտիշատ)	Սբ Սահակ Հայրապետ	1	Հեթանոսական Հայաստանի նշանավոր բնակավայրերից էր (Յաշտիշատ)՝ սրբազան Քարբե լեռան (այժմ՝ Bahceziyaret) հարավային ստորոտին: Այստեղ էր գտնվում Հայոց աշխարհի ութերորդ գլխավոր Վահևանեան կամ Վահևահեան մեհյանը՝ նվիրված Վահագնին («ութերորդ պաշտօն հոջակաւոր անուանեալն Վիշապաբաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց»): Միաժամանակ այստեղ էին գտնվում « Ոսկեմայր » Անահիտի , ինչպես նաև «Սենեակ Վահագնի» կոչվող և Աստղիկ դիցուհուն նվիրված բազիլիկները: Քրիստոնեության ընդունումից հետո էլ Աշտիշատը պահեց

				<p>իր կրոնական կարևորությունը՝ դառնալով Հայոց կաթողիկոսների կենտրոն-ստավայրը: Ավանի համբավը նկատելիորեն աճեց հատկապես 439 թ. հետո, երբ այստեղ թաղվեց Սուրբ Սահակ Պարթևի աճյունը: Հայոց հայրապետի դամբարանի վրա հետագայում կառուցվեց նրա անունը կրող վանքը, որը մինչև 14-րդ դ. 90-ական թթ. եպիսկոպոսանիստ էր և հայտնի էր որպես «Առաջին Տաճար և Աթոռ Հայրապետանիստ»: Ըստ ավանդության Սբ Սահակի վանքն ավերել է արյունաբերու Լենկ Թեմուրը, որի հրամանով մենաստանի քարերով է կառուցվել Սուլուխի նշանավոր կամուրջը (տես անդ): Ի դեպ, Սբ Սահակի վանքից էլ առաջ է եկել գյուղի նոր անունը, որը վերջինիս տվել են Տարոն թափանցած քրդերը (dêyrîkê- «վանքի գյուղ»): Սրբավայրից պահպանվել էր միայն հայտնի ուխտավայր դարձած Սուրբ Սահակի դամբարան-մատուռը, որին կից գտնվում էր փայտաշեն եկեղեցին: Դերիկ-Աշտիշատում հայտնի էր նաև Սբ Շուշանի («Շուշանիկ») շիրիմ-ուխտատեղին: Դերիկից 3 կմ արևմուտք դարձյալ Քարքեի ստորոտին ընկած Բաղչե քրդաբնակ դարձած գյուղի հետ են նույնացնում կիսաառասպելական հնդիկ Գիսանե և Դեմետրե քրմերի կողմից հիմնված Վիշապ պատմական քաղաքը: 20-րդ դ. սկ. այստեղ հայտնի էր Սբ Խաչեր կամ Ամենափրկիչ ուխտատեղին (ամենայն հավանականությամբ՝ խաչքարերի խումբ էր): Դերիկ-Աշտիշատից շուրջ 12 կմ հարևան էր Արածանի-Մուրատ գետի աջ ափին է գտնվել Հայոց Սանատրուկ Արշակունի արքայի կողմից (88-110 թթ.) հիմնված Մծուռն կամ Մծուրք քաղաքը, որն ավերվել է երկրաշարժից 3-րդ դ.: Այս շրջանում գտնվում էին երբեմնի հայաբնակ Աղփունար (թրք. «սպիտակ աղբյուր»), Խարաբաբեշիշ (թրք. «խենթ տերտեր») և Սայորիկ գյուղերը:</p>
40	Դերքեվանք (Տերգևանք, Ներքիվանք)	Սբ Թորոս	1	<p>Ժողովրդական ավանդության համաձայն այստեղ էր թաղված աշխարհառջակ փիլիսոփա Դավիթ Անհաղթը: Ինչպես հուշում է գյուղի անունը՝ ժամանակին այստեղ եղել է մենաստան («Ներքին վանք»):</p>
41	Դվնիկ (Դունիկ)	Սբ Սիմեոն (Սբ Սիոն)	1	<p>Գյուղում կար ավերակ եկեղեցի՝ Սբ Դավիթ անունով: Դվնիկում պահվել է «Շեկ Ավետարան» ձեռագիր մատյանը: Գյուղի շրջակայքում կային մի քանի ուխտատեղիներ, որոնցից հայտնի էին Թուխ Մանուկը (ավերակ եկեղեցիով և գերեզմանատան մնացորդներով) և Ղայրանդարի Սուրբը:</p>
42	Դրմետ (Դրմերթ, Տրմետ)	Սբ Գևորգ	1	<p>Գյուղում պահվել է ձեռագիր մատյան: Դրմետում պահպանվել են հինավուրց Վանի թագավորության դարաշրջանի բերդի ավերակներ և սեպագիր արձանագրություն: Շրջակայքում նշմարվում էին 2 վանքի ավերակներ: Ավանդաբար գյուղի անունը կապվում է կիսաառասպելական Դեմետրե քուրմի հետ, որի գերեզմանը՝ տեղացիների համոզմամբ, գտնվում էր այստեղ: Դրմետը Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1200 հայ բնակչով:</p>

43	Երշտեր (Էրշտեր)	Սբ Թովմա	1	Մոտակայքում պահպանվել էր կիսավեր Սբ Կարապետ վանքը՝ հարակից սուրբ ջերմուկով: Երշտերը Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1100 հայ բնակչով:
44	Երիզակ (Էրիզակ)	Սբ Աստվածածին (Սբ Մինաս)	1	Գյուղից շուրջ 4,5 կմ հս գտնվում էր երբեմնի հայաբնակ Բյաթուխ (Պյաթուխ) գյուղը:
45	Զիարեթ (Կեղք, Կետղեթ)	Սբ Աստվածածին, Սբ Ստեփաննոս	1	Հիշվում է նաև Սբ Մատթեոս եկեղեցին: Գյուղում կար Թուխ Մանուկ (եկեղեցիով և գերեզմանատան մնացորդներով): Մշո գավառի խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. 2500 հայ բնակչով: « Տարոնի պատմություն » տվյալները թույլ են տալիս Զիարեթը նույնացնելու Իննակնյան մեծիանի հարկատու Կեղք (Կեղս, Կետղեթ) դաստակերտի հետ: Զիարեթից արմ Դերսիմ քրդաբնակ գյուղի մոտ է գտնվել Թարձենք կամ Թառձյանք պատմական ամրոցը, որից էլ գյուղանունը (քրդ. աղավաղմամբ): Շուրջ 6 կմ արմ Մշո և Գենջի սանջակների սահմանագլխին գտնվում էր Քիլսոր կամ Գլածոր երբեմնի հայաբնակ գյուղը: Չի բացառվում, որ 13-րդ դ. 2-րդ կեսին այստեղ է Ներսես Մշեցին միջնադարյան վարդապետանոց հիմնելու ապարդյուն փորձեր կատարել: Ըստ էության, տեղանունը Տարոնից է տեղափոխվել Վայոց ձոր :
46	Թիլ	Սբ Աստվածածին, Սբ Մեսրոպ	1	Գյուղում ի պահ էր տրված Ամենայն Հայոց կաթողիկոս Սուրբ Արիստակես Ա-ի (325-333) նշխարների մի մասը: Շրջակայքում գտնվել են Սբ Արիստակես և Սբ Ներսես ավերակ վանքերը:
47	Խալաթ (Խլաթ), Հալկական			
48	Խաշխաղաղ (Գաշղաղաղ)	Սբ Աստվածածին	1	Ավելի քան 3 կմ հվ՝ Մեղրագետի աջ ափին գտնվում էր Մղագոմ կամ Մեղագոմ (Մղագոն) երբեմնի հայաբնակ գյուղը, ուր պահպանվել էր Սուրբ Պողիկարպոսին վերագրվող շիրիմ-ուխտատեղին: Նույն գետի հանդիպակաց ափին էր դարձյալ նախկինում հայաբնակ Ղլագոմ (Խշլագոմ) գյուղը:
49	Խասգեղ	Սբ Երրորդություն, Սբ Թալիլեա (Սբ Թալալոս), Սբ Ստեփաննոս	1	Խասգեղի հայ բնակչությունը կենտրոնացած էր 4 թաղերում՝ Խածուռիք, Մարաղբյուր, Վերին կամ Գավթոց (ինսա՝ սասունցիների) և Տունջո (տվյալները՝ ըստ Խաչիկ Գաշտենցի): Ավանում բնակվում էին նաև փոքրաթիվ քրդեր, որոնք այստեղ հայտնվել էին միայն 19-րդ դ. 80-90-ական թթ: Շրջակայքում հանդիպում էին բազմաթիվ սրբավայրերի (այդ թվում՝ վանքերի) ավերակներ: Ո՛չ միայն Բիթլիսի նահանգի, այլև Արմ Հայաստանի խոշոր գյուղական բնակավայրերից էր՝ 1914 թ. մինչև 5000 հայ քր-նակչով:
50	Խարդոց (Խարթոս, Խարաբա-Խարթոս), Հալկական	Սբ Սարգիս	1	Շրջակայքը հարուստ էր հայկական ուխտատեղիներով:

51	Խարս (Խարձք)	Սբ Աստվածածին (Սբ Տիրամայր), Սբ Բարսեղ	1	Գյուղում պահվել են 2 ձեռագիր մատյաններ, որոնցից առավել հայտնին « Շեկ Ավետարան » էր: Շրջակայքում պահպանվել էին 2 մենաստանների ավերակներ, որոնցից հայտնի էր Կուկուլի եկեղեցին (ուխտատեղի էր): 13-րդ դ. հիշատակվում է Խարձի անապատը : Գյուղը Մշո գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. 1400–1500 հայ բնակչով: Խարձը գտնվում էր Մեղրագետի աջակողմյան Նորքաղաքի ջուր վտակի ստորին հոսանքի հովտում: Նույն վտակի վերնահովտում գտնվել են բազմաթիվ հայաբնակ գյուղեր, որոնք՝ հիմնականում 19-րդ դ. 1-ին 30-ամյակին հայաթափվելով, լքվել էին քրդերով: Այդ գյուղերից հայտնի էին Անդակը (Արդակ , հնագույն բերդի ավերակներով), Բարձանը (քրդ. Bizo կամ Puzyan), Հնգրըվանք < Հանգրուանք (Խնկրովան , համանուն ուխտատեղիով), Նորքաղաքը (ընդարձակ բնակատեղիով), Քաղմուտը (Քրխմուտ < Կաղնուտ կամ Կաղամախուտ): Ավելի հս` Մշո և Բուլանուխի սահմանագլխի երկայնքով, նույնպես հանդիպում էին առանձին հայեցի անվանումները պահած գյուղեր (Սինակ , Վանիկ են):
52	Խեյբիան (Ղայքիան, Խորնի), Հայկական	Սբ Աստվածածին, Սբ Թուխ Մանուկ	1	Գյուղում կար ևս 1՝ ավերակ եկեղեցի, Սբ Սարգիս անունով: Խեյբիանում պահվել է ձեռագիր մատյան: Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1200 հայ բնակչով: Գյուղից մի փոքր արևելք պահպանվել էր Խրտում բնակատեղին: Այս փաստը, ինչպես նաև « Տարոնի պատմության » հաղորդած տեղեկությունները թույլ են տալիս Խեյբիանը նույնացնել Իննակնյան մեհյանին հարկատու Խորնի ավանին, որն ըստ Ջենոպ Գլակի ունեցել է 1906 «երդ» բնակիչ: Ինչպես հայտնի է, Խորնին համարվում էր Մովսես Խորենացու ծննդավայրը և նույնացվում ուշ միջնադարից հիշվող Խորոնք գյուղի հետ: Փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ Իննակնյան մեհյանի հարկատու բնակավայրերը (այդ թվում՝ և Խորնին), որոնք, քրիստոնեության ընդունումից հետո անցան հռչակավոր Սբ Կառապետի վանքին, գտնվում էին Արածանուց հս: Մինչդեռ Խորոնքն ընկած էր նույն գետից շուրջ 5 կմ հվ՝ շրջակա մի շարք գյուղերի հետ մտնելով Տարոնի մեկ այլ ոչ պակաս նշանավոր Սբ Հովհաննես կամ Եղրդուտի վանքի թեմի մեջ (տես իր տեղում): Ըստ այդմ՝ բացառվում է վերոհիշյալ 2 բնակավայրերի նույնացումը, ինչը հիմնված է սուկ տեղանունների արտաքին նմանության վրա: Ավելին, ինչպես երևում է Իննակնյան մեհյանին ենթակա դաստակերտ-ավանների թվարկման հաջորդականությունից՝ Խորնին գտնվել էր Տում (Տումք, 20-րդ դ. սկ.՝ Տում) բնակավայրի անմիջական հարևանությամբ: Ընդ որում, վերջինս « Տարոնի պատմության » որոշ ձեռագիր օրինակներում հանդիպում է նաև Խրտում տարրնթերցմամբ, ինչը, կրկին արտաքին նմանությունից ելնելով, նախ՝ գրիչները, ապա և՛ ուսումնասիրողները,

				նույնացրել են Տումի հետ: Իրականում, ինչպես վերը տեսանք, Խրոնումն առանձին բնակավայր էր, որն, ի դեպ, գտնվում էր Խեյբիանի և Տումի միջև բարձրացող մի բլրակի շրջանում: Վերոգրյալից ելնելով՝ կարծում ենք, որ պատմական Խորնի բնակավայրի հետ համընկնում է հենց Խեյբիանը :
53	Խորոնք	Սբ Աստվածածին	1	
54	Խովեր	Սբ Աստվածածին (Սբ Հակոբ)	1	Շրջակայքում պահպանվել էին վանքերի ավերակներ:
55	Խսլնոց (Խարրնոց)			
56	Խվներ, Ներքին (Վարի)	Սբ Աստվածածին		Մոտակայքում պահպանվել էր կիսավեր Սբ Գևորգ վանքը, որը հայտնի ուխտատեղի էր: Ժամանակին հայաբնակ էր նաև շուրջ 1,5 կմ հվ-արևմուտք գնվող Վերին Խվները , որը 19-րդ դ. կեսերից դառնալով քրդաբնակ՝ կոչվում էր Քուրդ Խվներ (պահպանվել էր եկեղեցին): Խվներից հս՝ Մեղրագետի աջ ափին գտնվում էին երբեմնի հայաբնակ Դուզ Մանիկ (Քուրդ Մ. , նաև՝ Ներքին Մ. , եկեղեցին՝ Սբ Մինաս) և Նորք (քրդ. Nök) գյուղերը
57	Ծխավու (Ցխավի)	եկեղեցի	1	Մոտակայքում գտնվում էր Սբ Սահակ ավերակ վանքը: Ավելի քան 4 կմ հս-արևելք՝ Արածանու աջ ափին, բարձրացող Ոսպնյուր (օտարախոնջ՝ Mercimek tepesi) լեռնակի վրա պահպանվել էին համանուն բերդի, իսկ ստորոտին՝ ավանի ավերակները: Դրանք 1740-ական թթ. սկ. որպես իշխանանիստ կենտրոն, կառուցել է Մուշի ազդեցիկ քուրդ տիրակալ Ալադին (Ալանդին) բեկը: Ոսպնյուրն ավերվել և անբնակ է դարձել 1747 թ. Ալադինի դեմ Քիթլիսի խանի կողմից կազմակերպված արշավանքի հետևանքով: Ավելի հս՝ Արածանու արդեն ձախ ափին, սփռված էին Անջիկ , Ջորավիզ կամ Մուհաջիր Ջորավա (19-րդ դ. 60-ական թթ. այստեղ հաստատվել էին կովկասցի «մուհաջիրներ», ինչպես «գաղթականներ»), Սարգիսան երբեմնի հայաբնակ գյուղերը:
58	Ծղակ	Սբ Ստեփանոս	1	Գյուղում պահվել է ձեռագիր մատյան: Պահպանվել էին 2 այլ եկեղեցիների ավերակներ:
59	Ծոզետ	Սբ Թովս Մանուկ	1	Գյուղում պահվել է ձեռագիր մատյան: Մոտակայքում կար ավերակ վանք: Ծոզետի հյուսիսով հոսող Մեղրագետի վրա պահպանվել էր քարաշեն կամուրջ:
60	Կեմիկ (Գեմիկ)	Սբ Հարություն (կիսավեր)		Եկեղեցին հայտնի ուխտատեղի էր: Մոտակա Ավելյավոա վայրում գտնվում էր Սբ Անեանի ուխտատեղին: Կեմիկը 18-19-րդ դդ. Բաղուի հայկական մելիքության բազմամարդ և զուտ հայաբնակ ավաններից էր: 19-րդ դ. 30-40-ական թթ. մեծ հեղինակություն էր վայելում քաջարի Կեմիկցի Ալեքսանը , որը հարևան Ավրան գյուղի Տոնիկ Քեհյայի որդի Սարգսի հետ համառ պայքար է մղել հայկական իշխանության տարածք թափանցել ձգտող մյանցի վաչկատուն քրդերի դեմ): Կեմիկը 1834 թ. ունեցել է 80 տուն (հարևան Ալադինի հետ): Սակայն քրդական վայրագությունների հետևանքով գյուղում 1914 թ. մնացել էր ընդամենը 10 տուն հայ (քրդերը՝ 30 տուն էին):

61	Կուրավու (Կուրավի)	Սբ Աստվածածին (Սբ Ավետարան), Սբ Հակոբ	1	Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. 1200 հայ բնակչով:
62	Հավատորիկ	Սբ Աստվածածին	1	Շրջակայքում պահպանվել էին 3 վանքերի ավերակներ: Հավատորիկը Մշո գավառի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1500 հայ բնակչով:
63	Հացիկ (Հացեկաց)	Սբ Հակոբ		Գյուղը հայ մտքի հանձար, հայոց այբուբենի ստեղծող Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդավայրն է: Հացիկի մոտ պահպանվել էին ավերակ Սբ Մեսրոպ մենաստանը (ժողովրդի բերանում՝ « Մեսրոպ Վարդապետ », քրդ. Dêrâ Hasik), որն ընդհուպ մինչև Մեծ Եղեռն կարևոր ուխտատեղի էր: Գյուղում հայտնի էր նաև « Ավետիսի ծառերի Սուրբ » անունը կրող մատուռը: Շրջակայքում պահպանվել էին 2 ավերակ մենաստաններ: Հացիկից շուրջ 3 կմ հս-արևմուտք՝ Մեղրագետի Աբլբունիսը օժանդակի ձախ ափին գտնվող երբեմնի հայաբնակ Զորավիզ գյուղում (20-րդ դ. սկ Քուրդ Զորավա) պահպանվել էին եկեղեցու և գերեզմանատան մնացորդներ:
64	Հերկերտ (Հարկերտ)	Սբ Սարգիս	1	
65	Հունան	Սբ Թովմաս	1	Գյուղի մոտակայքում գտնվում էր ավերակ Սբ Ղազարոս եկեղեցին: Գյուղի ուխտատեղիներից հայտնի է Սբ Գևորգը : Հունանը Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1300 հայ բնակչով:
66	Զափնա (Ծափնա)	Սբ Գևորգ	1	Գյուղում կար նաև Թուխ Մանուկ սրբավայր:
67	Ղզըլաղաջ (Խզլաղաձ, Կզըլխաչ)	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ	1	Ղզըլաղաջը Մշո գավառի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. ավելի քան 1400 հայ բնակչով:
68	Մառնիկ, Վերին (Հայ Մառնիկ)	Սբ Լուսավորիչ	1	Պաշտոնապես՝ Dağmarnik (թրք. «լեռնային Մառնիկ»), ի տարբերություն ավելի արլ՝ Չուխուրում գտնվող մեկ ուրիշ, նույնանուն գյուղի. տես թիվ 56): Գյուղը տեղադրված էր Հայկական Տավրոսի կենտրոնական մասը կազմող Սիմսարի հյուսիսահայաց մասում բարձրացող Քանասար լեռան հվ ստորոտին: Շրջակայքում պահպանվել էին բազմաթիվ հայկական հուշարձաններ, սրբավայրեր: Մասնավորապես Մառնիկի մոտակա ավերակ Կարմիր վանքը (Կարմրո վանք) հայտնի ուխտատեղի էր: Հս-արևմուտքում բարձրացող Ծծմակաքիթ (Ծծմակառտ) լեռնագագաթի ստորոտին գտնվում էր Կառվիքար կամ Կարվիքար կիսավեր բերդը:
69	Մառնու մեգրե (մգրե)			
70	Մատնավանք			Համանուն վանքին կից ագարակը («մեգրե»), ուր բնակվում էին մենաստանի մշակները և սպասավորները: Մատնավանքը , որը հայտնի էր նաև Մատրավանք կամ Մանրավանք անվանումներով, Տարոնի հնագույն և նշանավոր հոգևոր կենտրոններից մեկն էր, որի հիմնադրումը վերագրվում է Սուրբ Գրիգոր Լուսավորչին (302 թ.): Կառուցված էր Արածանի-Մուրադի աջ ափին՝ Ոսպնբլուրի հարավային ստորոտին, Ծխավու ավանին կից (արևմուտքից): Վանքի թեմն ընդգրկում

				էր գետի միջին հոսանքի 2 ավերին սփռված շուրջ մեկ տասնյակ գյուղերն ու ավանները, այդ թվում՝ Ալիջան, Աղջան-Ողական, Արտերթ, Գերիկ-Աշտիշատ, Ծխավու, Կուրավու, Շեյխ Բրիմ, Շեյխ Ուսուֆ : Մինչև 1915 թ. վանքն ուներ փոքրաթիվ միաբանություն, որը վանահայր Ստեփան քահանա Սուլույսցու հետ զոհ գնաց եղեռնին:
71	Մեղդի (Մեխտի)	Սբ Միանձունք (Սբ Մասունք)	1	Գյուղից հս-արևելք բարձրացող Սերգիսարի (Սերկիսար) լեռնագագաթի քարաժայռերում գտնվում էր Սրբոց Միանձանց (Սբ Միանձունք) հայտնի ուխտատեղին, որը 7-8-րդ դդ. եղել է ձգնակյաց վանականների կենտրոն: Վերջիններիս նահատակությունից հետո նրանց աճյունները տեղափոխվել են Մեղդի ՝ ամփոփվելով նորակառույց եկեղեցիում, որտեղից էլ անվանումը: Նույն Սերգիսարի ձորում (Սերգվաձոր) գտնվում էր Գեղի Մխտի (հավանաբար՝ Բաղլուի մելիքության մելիքներից) կիսավեր բերդը: Նույն շրջանում հայտնի էին նաև Ղարաղուշաբերդը և Գյալառաշի ամրոցը (քրդ. Gâlarâş-«սև բերդ»): Հում Մեղդին (Մեղտի, հիմնադիր հնդիկ քուրմ Մեղտեսի անունից) Տարոնի խոշոր բնակավայրերից էր (հիշատակվում է որպես գյուղաքաղաք): Զենոբ Գլակի ՝ զգալիորեն չափազանցեցված տվյալներով, ունեցել է 2800 «երդ» կամ «ծուխ» բնակիչ, և Ինսակնյան մեխյանի հարկատու բնակավայրերից էր: Մեղդիում եղել է նաև բերդ:
72	Մկրագոմ	Սբ Կիրակոս, Սբ Սարգիս	1	Գյուղի գերեզմանոցում պահպանվել էր սեպագիր արձանագրություն:
73	Միլա Խորան (Մալախորան)			Որոշ աղբյուրներում նշվում է Բուլանուխի կազմում:
74	Մոկունք (Մոգունք)	Սբ Աստվածածին (Սբ Սարգիս)	1	Մոտակայքում պահպանվել էին Սբ Գասպար վանքի ավերակները: Ըստ ժողովրդական ավանդության, այստեղ էր վախճանվել Բեթղեհեմ մանուկ Հիսուսին այցելության գնացած 3 մոզերից մեկը՝ Գասպարը , որի շիրմին էլ հետագայում կառուցվել էր իր անունով մենաստանը: Ընդ որում, գյուղի անունը ևս ժողովուրդը կապում էր «մոզ» Գասպարի հետ (Մոգունք > Մոկունք): Դեպի Մուշ ձգվող Մոզձորում ՝ բարձունքի վրա, գտնվում էր Աստղոնք (Աստղունք) կամ Աստղնբերդ պատմական ամրոցը: Ավելի հվ դեպի Սիմսար կամ Կուռտիկ լեռնագագաթը (2729 մ) տարածվող Այծանաձորում պահպանվել էին Այծից բերդի ավերակները (ժողովուրդն այն կոչում էր Փլած բերդ):
75	Նորակ (Ըշրաֆթան)			
76	Նորշեն (Ֆրանկ Նորշեն)	Սբ Աստվածամայր (Սբ Նշան), Սբ Սոֆիա (Սբ Սոփի)	1	Սբ Սոֆիան նշանավոր և հնագույն ուխտատեղի էր (որոշ տվյալներով՝ շուրջ 800 տարվա վաղեմության): Նորշենը ոչ միայն Բիթլիսի նահանգի , այլև Արմ Հայաստանի խոշոր գյուղական բնակավայրերից էր՝ 1914 թ. 3500-4000 հայ բնակչով:
77	Շեյխ Բրիմ (Շեխարիմ)	մատուռ		Գյուղում պահվել է ձեռագիր մատյան:

78	Շեխյան (Շեխյանք)	Սբ Աստվածածին, Սբ Խաչ	1	Գյուղում պահվել են 1-ից ավելի ձեռագիր մատյաններ: Շեխյանք Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1300 հայ բնակչով:
79	Շեխյ Ռուսոֆ (Շեխուսուֆ, Շեխյ Յուսուֆ)	Սբ Աստվածածին	1	Գյուղի եկեղեցին հայտնի ուխտատեղի էր:
80	Շնյակ, Հայկական (Հայ Շնյակ)	Սբ Սարգիս		Մոտակայքում գտնվում էր Սբ Կարապետ վանքը (տեղացիների կողմից օգտագործվում էր որպես եկեղեցի): Վերջինս հայտնի ուխտատեղի էր՝ նշանավոր բուժիչ հատկություններ ունեցող ջերմուկով:
81	Ուշտամ, Հայկական (Հայ Հուշտամ)	Սբ Աստվածածին, Սբ Թորոս	1	
82	Ուռուղ (Ուրուղ)	Սբ Աստվածածին ^o	1	Մոտակայքում պահպանվել էր կիսավեր Կարմիր վանքը , որը միաժամանակ հայտնի ուխտավայր էր: Ուռուղի շրջակայքում գոյություն ուներ 2 բերդ: Դրանցից Արածանու ափին գտնվող բլրի վրա կառուցված ամրոցը սխալմամբ նույնացվել է Ողականի հետ (տես Աղջան): Ենթադրաբար Ուռուղի շրջանում էր տեղադրվում նաև պատմական Կավկավ քաղաքը: « Տարոնի պատմության » տվյալները, ինչպես նաև գյուղանունը թույլ են տալիս Ուռուղը , իհարկե, որոշակի վերապահումով նույնացնելու հնագույն Հոռեանք (Հառեանք) ավանի հետ, որը գտնվում էր Պալոնյաց գավառում (վերջինս ձևավորվել էր Տարոնի արմ հատվածից): Ըստ այդմ, բացառվում է Հոռեանքի նույնացումը Ավրանի հետ, որը գտնվում էր շուրջ 30 կմ հս-արևելք՝ Քարքե լեռան շրջանում: Ըստ Ջենոբ Գյակի , այստեղ է կանգնեցվել Հոռենից Խաչը : Ուռուղը (պաշտոնապես՝ Օրի) Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1350 հայ բնակչով: Գյուղից արմ՝ Արածանու ձախ ափին, Հայկական Տավրոսի Խոզմուսար լեռնագագաթի հյուսիսային ստորոտին գտնվող երբեմնի հայաբնակ Ջանգոք (Ծաղկունք) , Նավալեմարան (Հովիտ, քրդ. Nâwâlêmaran - «օձահովիտ») և Մուլք (Մլքաջուր, քրդ. Nâwâlê-mülk) գյուղերը 15-րդ դ. հիշվում են Մշո Սբ Հովհաննես (Եղրդուտի) վանքի թեմի մեջ:
83	Ջրիկ	Սբ Աստվածածին (Ջրից Աստվածածին)	1	Գյուղում պահվել է ձեռագիր մատյան: Եկեղեցին նշանավոր ուխտատեղի էր, որի մոտ տոնական օրերին տեղի էին ունենում ձիարշավի մրցումներ (ջիրիդ):
84	Սահակ (Սհակ)			Գյուղում կար ավերակ բերդ (Սահակաբերդ)
85	Սեգրան (Սեկրան)			Գյուղանունը քրդերեն նշանակում է «եռաբլուր»:
86	Սինամերիկ (Շուշամերկ)			Գյուղից մի փոքր հվ՝ Ծծմակի գետակի վրա, կառուցված էր քարաշեն կամուրջ:
87	Մսձնուտ	Սբ Աստվածածին	1	Գյուղի եկեղեցին հայտնի ուխտատեղի էր: Մշո Սբ Հովհաննես (Եղրդուտի) վանքի թեմի 1445 թ. նշանավոր կոնդակում հիշատակվում են 2 Մսձնուտներ : Ցավոք, 2-րդ նույնանուն գյուղի վերաբերյալ տվյալներ չկան:

88	Սոխգոմ (Սողգոմ)	Սբ Սահակ	1	Գյուղում գոյություն է ունեցել նաև մատուռ: Սոխգոմը Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. 1000 հայ բնակչով:
89	Սորդար	Սբ Աստվածածին	1	Գյուղից հս-արևմուտք՝ Սբ Կարապետի ճանապարհին, գտնվում էր Ծիծեռն (Ծիծառն, քրդ. աղավաղումով՝ Zivzêrin) բնակատեղին, ուր պահպանվել էր Սբ Գրիգոր կիսավեր եկեղեցին: Ավանն ամայացել էր 17-րդ կամ 18-րդ դ.: Ծիծեռնի ավերակների մոտ բխում էր « Կանիե Գարան » սրբացված աղբյուրը (քրդ. «բուժիչ աղբյուր»):
90	Սուլուխ (Սլուկ, Սլկունիք)	Սբ Պողոս-Պետրոս, Սբ Մինաս	1	Գյուղից մի փոքր հս՝ Արածանու վրա, կառուցված էր 10-թռչքանի («աչքանի») Սուլուխի հռչակավոր քարաշեն կամուրջը (14-րդ դ. տես Դերիկ): Գյուղի մոտակայքում գտնվում էր Գետփի Սբ Գորգ (Գևորգ) երբեմնի վանքը, որը 20-րդ դ. սկ. հայտնի ուխտատեղի էր: Սուլուխը Մշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1100 հայ բնակչով:
91	Սուրբ Առաքելոց			
92	Սուրբ Հովհաննես (Եղորդուտի վանք)			Թիվ 91-93-ը՝ նշված վանքերին կից ագարակ-«մեզրեններն» էին: Մանրամասն տես ստորև:
93	Սուրբ Կարապետ			
94	Վարդենիս	Սբ Աստվածածին, Սբ Հակոբ	2 (աղ-ջիկների և տղաների)	
95	Վարդիխաղ (Վարդիխաչ)	Սբ Սարգիս		Պահվում էր սրբացված ձեռագիր մատյան՝ « Կարմիր Ավեսարանը »: Գյուղում կար Թուխ Մանուկ : Տեսանելի էին 2 մենաստանների ավերակներ: Վարդենիսը Մշո գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. 2200 հայ բնակչով: Վարդենիսի գետակի (Մեղրագետի օժանդակներից էր) վերին ձորակներում գտնվում էին հայաստն Սուսերդ, Սիփանոք և Աղդատ գյուղերը:
96	Տալաս	եկեղեցի		Մոտակայքում պահպանվել էր կիսավեր Վարդիխաչի վանքը ՝ կից սրբազան ծառերի պուրակով, որը հայտնի ուխտատեղի էր:
97	Տատրագոմ (Տատրագոմ, Գոմեր)			
98	Տափե (Դամփել)	Սբ Սարգիս		Չի բացառվում, որ 17-րդ դ. հիշատակվող Դանիել գյուղն է (ունեցել է Թուխ Մանուկ եկեղեցի):
99	Տոմ (Տում, Տումբ)	Սբ Աստվածածին		Կար նաև 2 ավերակ եկեղեցի՝ Սբ Սիմեոն և Սբ Ստեփաննոս : Տոմբ (Տումբ) Իննակնյան մեխյանին հարկատու 12 դաստակերտներից էր, որն ըստ Ջենոպ Գյակի ուներ 900 «երդ» կամ «ծովա»:
100	Ցրոնք	Սբ Աստվածածին, Սբ Հակոբ	1	Գյուղի շրջակայքում գոյություն ուներ 4 ուխտավայր, որոնցից հայտնի էր ժողովրդի կողմից « Նոյի թռռների քարեր » կոչվող քարակույտը: Ցրոնքը Հայաստանի հնագույն բնակավայրերից էր: Պատմահայր Խորենացու մոտ գրանցված հնագույն հայկական ավանդազրույցի համաձայն՝ Ցրոնքում առաջինը բնակություն է հաստատել Նոյի թռռ Տարբանը (Մեմի որդին), որի զավակները բազմանալով՝ «ցրվել» են տարբեր կողմեր, որտեղից էլ առաջացել գյուղի անունը: Ի դեպ, այդ իրադարձությունն արձանագրված է նաև

				հին Հայոց օրացույցում, որի 25-րդ օրը կոչվում է Յրոն կամ Սփիս : Յրոնքը Բիթլիսի նահանգի խոշոր գյուղական բնակավայրերից էր՝ 1914 թ. ավելի քան 3000 հայ բնակչով:
101	Փակա(հ), Ներքին կամ Վարի (Վարի ազարակ)			Վերին և Ներքին Փակաները Սբ Կարապետի ազարակներն էին (տես ստորև):
102	Փակա(հ), Վերին կամ Վերի (Վերի ազարակ)	Սբ Սարգիս		Պարսպապատ էր:
103	Փեթար	Սբ Սարգիս	1	
104	Փողրկով	Սբ Գևորգ	1	
105	Քարծոր	Սբ Լուսավորիչ	1	Շրջակայքը հարուստ էր ուխտատեղիներով և սրբավայրերով: Ուշագրավ է, որ վերջիններիս կից գործել են ջրաղացներ, որոնցից հայտնի էր Սիրակի «ջաղացքը» :
106	Քոլոսիկ	Սբ Հակոբ		Եկեղեցին նշանավոր ուխտատեղի էր: Գյուղում կար ևս 2 կիսավեր եկեղեցի:
107	Քոշկ (Քոշք)			Առինջվանքի գյուղակ-«արվարձան» էր:
108	Քուրդմեյդան (Տարմածին)	Սբ Մինաս (Սբ Ժամատուն)	1	
109	Քրդագոմ	Սբ Աստվածածին	1	Գյուղում կար ևս 1 ավերակ եկեղեցի: Քրդագոմի շրջակայքում երևում էին վանքերի ավերակներ: Գյուղը Սշո գավառի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1500 հայ բնակչով:
110	Օղունք (Հողունք)	Սբ Սարգիս (Սբ Մինաս, հայ-կաթողիկե)	1	Սշո գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. ավելի քան 1000 հայ բնակչով:
111	Օրգնոց (Հորկնոց, Ուրկանոց)	Սբ Աստվածածին («Ներեք խորան»), Սբ Ստեփաննոս	1	

19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին հայաթափ եղած բնակավայրեր. **Գոլ (Կոլ)**, **Դեղձմեր** (պահպանվել էր եկեղեցու ավերակը, քրդ. Dizimir), **Դուզ Մառնիկ** կամ **Քուրդ Մառնիկ** (թրք. Düzmarlık, իմա՝ «դաշտի Մառնիկ», մոտակայքում՝ Վանի թագավորության դարաշրջանի ամրոց է պահպանվել), **Խաչուկ**, **Խվներ Վերին (Քուրդ Խվներ)**, **Ղշագոմ (Խշլագոմ)**, **Մուլք (Սլքաջուր**, քրդ. Nawâlâ Mulk), **Նորքաղաք**, **Փալաս**, **Քոխեր**:

2) Վերին Չխուր (Չուխուր)

Պատմական Տարոնի վարչական և ժողովրդագրական պատկերն ամբողջացնելու նպատակով Սշո գավառի հետ ներկայացնում ենք **Վերին Չխուրի** գյուղախմբի (թրք. nahiyе) հայաբնակ գյուղերի ցուցակը: **Վերին Չուխուրը** տարածվում էր **Նեմրուխ-Սարակն** լեռան (2807 մ) արևմտյան ստորոտից մինչև **Մեծամոր (Սշո շամբ)** ձահճուտները՝ **Փորակ** լճակով, և ընդգրկում **Մեղրագետի** ակունքների շրջանը: Վարչականորեն մտնում էր **Բիթլիսի (Բաղեշ) Կենտրոնական** սանջակի մեջ՝ անմիջականորեն ենթարկվելով նահանգապետ-վալիին: Գյուղախումբն ուներ շուրջ 3 տասնյակ բնակավայր: Կենտրոնը **Նորշեն (Չուխուր-Նորշեն)** ավանն էր, որը

մինչև 19-րդ դ. 70-ական թթ. վերջը հայաբնակ էր (գործել է նաև եկեղեցի): Սակայն օսմանյան իշխանությունների հակահայ քաղաքականության հետևանքով ավանը 20-րդ դ. սկզբին ամբողջովին վերածվել էր քրդական բնակավայրի (Մեծ Եղեռնի նախօրեին՝ շուրջ 250 տուն): **Նորշենի** մոտ պահպանվել էին բնակատեղիի (ժողովրդի կողմից կոչվում էր «քաղաք») ավերակներ և ջրամբարի մնացորդներ:

19-րդ դ. սկզբին **Վերին Չուխուրի** բնակչությունը գրեթե ամբողջությամբ կազմված էր հայերից, ինչը պարզ երևում է վարչամիավորի տեղանուններից: Սակայն քրդերի չդադարող ներհոսքը և աստիճանաբար նստակեցության անցնելը 19-րդ դ. 2-րդ կեսից հիմնովին փոխեցին պատմական Տարոնի ծայր արևելյան հատվածը կազմող այս գյուղախմբի ազգային նկարագիրը: 20-րդ դ. սկ. արդեն **Վերին Չխուրում** հայաբնակ էին միայն 7 գյուղեր (որպես կանոն՝ քրդախառն): Հայ բնակչության հիմնական մասը հարկադրված տեղափոխվել էր Սշո կամ Բիթլիսի (Բաղեշ) ավելի ապահով հայաշատ գյուղեր: Հետևանքը տեղի հայ բնակչության տեսակարար կշռի զգալի նվազումն էր (1914 թ. 2000 մարդ կամ 30 %-ը): 1915 թ. Տարոնի հայության կոտորածին զոհ գնացին նաև **Վերին Չուխուրի** հայերը: Միայն **Էրուն, Մոզակ** և **Մուշեղշեն** գյուղերի զինված տղամարդկանց մի մասին հաջողվեց անցնել **Մեծամորի** շամբուտները և շուրջ 3 շաբաթ դիմադրել ջարդարարներին: 1915 թ. հունիսին ռուսական բանակի զորամասերի առաջխաղացման շնորհիվ նշված գյուղերի փրկված հայերը տեղափոխվեցին Արևելյան Հայաստան:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Բավ (Փավ)			Հարևան Գոտնի (Կոտնի) գյուղը նախկինում հայաբնակ էր (անունից երևում է, որ ժամանակին տեղում գոյություն է ունեցել բորոտանոց կամ գոդենոց):
2	Էրուն (Սարեգոլե)	Սբ Քառասուն Մանկունք	1	Եկեղեցին հայտնի ուխտավայր էր: Նենրութ լեռան արմ ստորոտին էր գտնվում մեկ այլ ուխտատեղի՝ Հազրբաբա անունով: Գյուղը պաշտոնական աղբյուրներում հայտնի է Gölbasi անունով, ինչը տեղանվան թուրքերեն տարբերակն է (թե՛ քրդ. թե՛ թրք. «լճի գլուխ»): Էրունից 4 կմ հս-արևմուտք, պատմական Տարոնի շամբուտների Մեծամորի հս եզրին, պահպանվել էր հնագույն Օձքաղաք բնակատեղին, որի անունով էր հայտնի նաև մոտակա գյուղը (թրք. Özkağak), որը 19-րդ դ. արդեն քրդաբնակ էր դարձել: Գյուղում, սակայն, պահպանվել էր հայկական Զինավոր Սբ Գևորգ սրբավայրը, որին ուխտի էին գնում տարոնցիները: Այստեղ է գտնվել նաև հինավուրց Մեծամոր ամրոցը: Օձքաղաքի հյուսիսում գտնվում էին երբեմնի հայաբնակ Բերիկ(ներ) և Քոթյակ գյուղերը: Մի փոքր հվ՝ շամբուտի արլ եզրին բարձրացող Ծծմբակ կամ Զերմուկ (թրդ. Gärmav) լեռնագագաթի մոտ գտնվում էր Աղիջուր (Աղաջուր) երբեմնի հայաբնակ գյուղը:
3	Թախթալու			Թախթալուից շուրջ 2,5 կմ հվ-արևմուտք գտնվում էր հայանուն Նիստ գյուղը:

4	Ճապկիս (Ճավկիզ)	Եկեղեցի		Շրջակայքում պահպանվել էր գմբեթավոր 2 դամբարան: Ճապկիսի և Քրդասնի միջև՝ Մեղրագետի ակունքների շրջանում, գտնվում էին մի շարք նախկինում հայաբնակ գյուղեր՝ Զոնաջուր , Կակտու(ն) , Միջթաղ , Սեզ ևն:
5	Մոզակ (Մոզեկ, Մոզրք)	Եկեղեցի		Մոզակի հարևան Ողորմակ գյուղը նախկինում հայաբնակ էր:
6	Մուշեղշեն (Մշախշեն)	Սբ Գևորգ	1	Հայտնի էր նաև Սբ Սարգիս Զորավար վանքը: Որոշ տվյալներով 1914 թ. ուներ 150 տուն հայ բնակիչ:
7	Քրդասն (Քրսղամ)	Սբ Աստվածածին		

19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին հայաթափ եղած բնակավայրեր. **Բոբյան** (մինչև 19-րդ դ. 70-ական թթ. գործել է Եկեղեցի), **Մորլս** (**Վերին** և **Ներքին**), **Մաուրի**:

Գ) Սրբոց Առաքելոց վանք (Թարգմանչաց վանք)

Տարոնի այս հռչակավոր հոգևոր կենտրոնը գտնվում էր Մուշ քաղաքից շուրջ 6 կմ հարավ-արևելք՝ **Միմսարի Ծիրնկատար (Տիրինկատար, 2352մ)** լեռնագագաթի հյուսիսային ստորոտից սկիզբ առնող **Առդաձորի** եզրին: Ավանդաբար՝ վանքը հիմնել է **Սուրբ Գրիգոր Լուսավորիչը** 312 թ.՝ այստեղ ամփոփելով ԺԲ Առաքյալներից ոմանց, այդ թվում՝ **Սուրբ Անդրեասի, Սուրբ Ղուկասի, Սուրբ Պետրոսի** և **Սուրբ Պողոսի** մատուցները, որտեղից էլ՝ հիմնական անվանումը: Կոչվել է նաև **Եղիազարի կամ Ղազարի** վանք (մենաստանի առաջին վանահոր անունով), **Արեգնաձագ Տիրինկատարի** վանք, **Գլաձորի** վանք: Բաղկացած էր **Սբ Առաքելոց** (մայր տաճար), **Սբ Ստեփաննոս** և **Սբ Գևորգ** եկեղեցիներից: Վանական համալիրի մեջ էին մտնում նաև մենաստանի շրջափակից դուրս գտնվող **Սբ Թադևոս (Սբ Թադէոս)** եկեղեցին, որի անունով էլ է երբեմն վանքը կոչվել: **Սբ Առաքելոց** վանքը Հայոց խոշորագույն սրբավայրերից էր՝ նշանավոր ուխտատեղի: Մեծ հռչակ էին վայելում հատկապես «**Թարգմանչաց**» հսկա խաչքարերը, որոնց մի մասը կերտված էին նրբաձաշակ վարպետությամբ: Այդ կոթողները կանգնեցված էին **Պատմահայր Մովսես Խորենացու**, աշխարհահռչակ իմաստասեր **Դավիթ Անհաղթի**, նշանավոր իմաստասերներ **Եզնիկ Կողբացու**, **Մամբրե Վերծանողի** (Խորենացու եղբայրը) և **Պողոս Տարոնեցու**, պատմիչներ **Ղազար Փարպեցու** և **Ստեփաննոս Ասողիկ Տարոնեցու**, թարգմանիչ **Հայկազն Մշեցու** շիրիմներին: Վանքի տարածքում էին գտնվում նաև վանահայրեր **Եղիազարի (Ղազար)**, **Գրիգոր ձոնի**, իշխաններ **Համազասպ** և **Սահակ Արծրունիների**, **Չորդվանել Թոռնիկյանի (Մամիկոնյան)** գերեզմանները՝ համապատասխան խաչքարերով: **Սբ Առաքելոցը** միջնադարյան Հայաստանի գրչության և, ընդհանրապես՝ գիտության ու մշակույթի ամենանշանավոր կաճառներից էր: 13-րդ դ. 70-ական թթ. սկզբին **Ներսես Մշեցին** այստեղ է հաստատել **Խոր Վիրապի** «վարդապետարանը» (միջնադարյան համալսարան), որը գործել է մինչև 1281 թ.: Այնուհետև, **Տարոն** թափանցած քրդական ավազակաբարո ցեղերի վայրագություններից խուսափելու նպատակով, նա **Եսայի Նչեցու** աջակցությամբ, համալսարանը տեղափոխել է ավելի ապահով Սյունիքի **Վայոց ձոր** գավառի **Աղբերց վանք**, որը հետայդու, ըստ ընդուն-

ված կարծիքի, սկսել է կոչվել **Գլաձոր (Գայլեձոր)**՝ ընդունելով **Սբ Առաքելոցի** անվանումներից մեկը: Վանքին կից կար սրբացված **Լուսադրյուր** (ի դեպ, Տարոնում դրանք բազմաթիվ էին՝ գրեթե բոլոր հայաբնակ գյուղերի մոտ):

Սբ Առաքելոցը, տարբեր ժամանակներում բազմիցս ենթարկվելով ասպատակությունների և կողոպուտի, հսկայական վնասներ է կրել: Առանձնակի տուժել է տեղի երբեմնի հարուստ մատենադարանը: Դա էր պատճառը, որ 20-րդ դարասկզբին վանքում պահվող ձեռագրերի թիվը կազմում էր ընդամենը 126 մատյան: Դրանց շարքում մեծ հոչակ ունեին հայ գրչության և մանրանկարչության գլուխգործոց 2 մեծածավալ **ձառընտիրները** և տարոնցիների շրջանում «հրաշագործի» համբավ վայելող **«Կլիձ» Ավետարանը**, որոնք գտնվում էին առանձնահատուկ հոգաձության ներքո: Իր բարձրարվեստ փորագրություններով աչքի էր ընկնում նաև թանկարժեք երեսնոսի փայտից պատրաստված վանքի դուռը: Մինչև Մեծ Եղեռնը գործում էր գիշերօթիկ դպրոց (25-30 աշակերտ), որին կից գոյություն ուներ մանուսայագործության արհեստանոց:

Վանքն ուներ ընդարձակ թեմ (ենթարկվում էր Տարոնի առաջնորդությանը), որի մեջ մտնում էին Մշո գավառի **Մեղրագետից** հարավ գտնվող բնակավայրերը՝ **Մուշ** քաղաքից մինչև **Ավզուտ** գյուղ, ինչպես նաև **Սասունի** հյուսիսային **Շատախ** և կենտրոնական **Գավառ (Կավառ)** շրջանները՝ ավելի քան 70 բնակավայրերով:

Սբ Առաքելոցը 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին դարձել էր հայ ազատագրական շարժման կենտրոն, ուր բազմիցս ապաստանել են թուրքական բռնակալության դեմ պայքարող ֆիդայիների խմբերը: Հատկապես մեծ արձագանք գտավ 1901 թ. նոյեմբերի 6-21-ը տեղ գտած կռիվը, որը **Անդրանիկի** և **Գևորգ Չաուշի** գլխավորությամբ թշնամու բազմահազարանոց կանոնավոր բանակային գնդերի դեմ մղեցին 50-ից ավելի հայդուկներ:

1915 թ. ամռանը **Սբ Առաքելոցը** հիմնիվեր ավերվեց և ենթարկվեց վայրագ կողոպուտի, իսկ վանքի միաբանության անդամները, որոնց թվում և վանահայր **Հովհաննես** վրդ **Մուրադյանը**, գազանաբար սպանվեցին: Բարբարոսաբար ոչնչացվեցին նաև մատենադարանի ձեռագրերը, որոնցից փրկվել և մեզ է հասել 1202-1204 թթ. ստեղծված հոչակավոր **«Մշո ձառընտիրը» («Տոնական»)**: Ինչպես հայտնի է, այն աշխարհում ամենամեծ հայերեն ձեռագիր մատյանն է և այժմ պահվում է Մաշտոցյան Մատենադարանում: Վերապրած տարոնցիների անձնուրացության և նվիրվածության շնորհիվ փրկվել է նաև վանքի հիաքանչ դուռը, որը պահվում է դարձյալ Երևանում՝ ՀՀ պատմության թանգարանում: Ներկայումս պահպանվել են սոսկ **Սբ Առաքելոցի** տխուր ավերակները, որոնք պատմում են երբեմնի փառավոր անցյալի մասին:

Ե) Մշո սուլթան Սուրբ Կարապետ

Համազգային հոչակ վայելող այս մենաստանը գտնվում էր Մուշ քաղաքից շուրջ 45 կմ հյուսիս-արևմուտք՝ Մշո գավառի սահմանագլուխը կազմող **Հավատամք** լեռնապարի և նույնանուն լեռնագագաթի (2535 մ) հարավային ստորոտին: Մինչև Հայաստանում քրիստոնեության ընդունումը, մենաստանի տեղում եղել է **Իննակնյան** սուրբ աղբյուրների շրջա-

նում հնդիկ **Գիսանե** և **Գեմետրե** քրմերի կողմից հիմնված նշանավոր համանուն մեդիանը՝ **Աշոխատում** գտնվող ութերորդ գլխավոր **Վահե-վահյան** մեդիանի հարևանությամբ: Ավանդաբար քրիստոնեական տաճարը հիմնադրել է **Սուրբ Գրիգոր Լուսավորիչը**՝ 302 թ. այստեղ ի պահ տալով **Սուրբ Հովհաննես Մկրտչի (Կարապետ)**, մասամբ՝ **Սուրբ Աթանազիոսի**, մասունքները: **Սուրբ Կարապետն** իր նշանակությամբ երկրորդն էր **Սուրբ Էջմիածնից** հետո, համահայկական խոշոր ուխտավայր, որին այցելում էին թե՛ արևմտահայերը և թե՛ արևելահայերը: Հայտնի մյուս անվանումներն են՝ **Իննակնյան վանք**, **Գլակավանք** (ի պատիվ առաջին վանահայր **Ջենոբ Գլակի**), իսկ ժողովրդի շրջանում՝ **Մուրադատուր (Մուրադտուր**, իմա՝ «սրտի մուրադը, իղձը» կատարող) կամ **Մշո Մուլթան Սուրբ Կարապետ** անուններով: Մենաստանը հատուկ հարգանք ուներ հայ գուսանների («աշուղների») շրջանում՝ իր երաժշտական ձիրք շնորհելու ունակության համար (այցելել է նաև անմահ **Սայաթ-Նովան**, որը **Սուրբ Կարապետին** նվիրված ներբողյան ունի): Օտարները **Սուրբ Կարապետը** հորջորջել են Çanlı (Çengili) kilisesi (manastırı), այն է՝ «զանգակավոր եկեղեցի կամ վանք»:

Սուրբ Կարապետը հայ ճարտարապետության երևելի հուշարձաններից էր՝ կառուցված ինքնատիպ ոճով և պարսպապատ: Այն իրականում վանական հսկա մի համալիր էր՝ բաղկացած **Սուրբ Կարապետ** (մայր տաճարը), **Սուրբ Աստվածածին**, **Սուրբ Գևորգ** և **Սուրբ Ստեփաննոս** եկեղեցիներից: Բոլոր 4 եկեղեցիները մուտք ունեին դեպի 16 սյուների վրա հենվող գլխավոր **Կաթողիկե** եկեղեցի, որի Ավագ խորանին ագուցված էր 4 մարմարե քանդակազարդ խաչքար: Ճարտարապետական բարձր արվեստով էր կառուցված նաև վանքի զանգակատունը՝ **Սուրբ Հոգու մատուռը**: **Սուրբ Կարապետի** շրջափակում պահպանվել էին 11-12-րդ դդ. թվագրվող մի քանի հնագույն խաչքարեր: Իրենց կատարման նրբաձաշակ արվեստով առանձնանում էին նաև Ազարիա փիլիսոփայի և Տեր Սամուել քահանայի հիշատակին նվիրված «խաչկալները»: Ինչպես վանքի ներսում, այնպես էլ հարևանությամբ գտնվում էին հոգևոր և աշխարհիկ գործիչների բազմաթիվ գերեզմաններ: **Սուրբ Հովհաննես Մկրտչի** մասունքներն ամփոփված էին **Սբ Կարապետ** մայր տաճարում: Վանքում էին թաղված մի շարք **Մամիկոնյան** իշխաններ, որոնցից հիշատակելի են **Մուշեղը**, **Գայլ Վահանը**, **Թոռնիկը** և ուրիշներ: Վանքին կից գտնվում էր **Սուրբ Հարության** հնագույն մատուռը, որի տեղում, դատելով ժողովրդի մոտ տարածված «**Դևտուն**» անունից, հնում եղել է բազիլ:

Վանքից դուրս ևս կային մի շարք ուխտավայրեր՝ **Սուրբ Սարգիս** եկեղեցին, **Թողկա** կամ **Հարանց** բլուրը, ուր գտնվում էր **Սբ Կարապետի** 7-րդ դ. վանահայր **Թողիկի (Թաղևոսի)** գերեզմանը, **Ավետյաց բլուրը**, ուր գտնվում էին ձգնավորներ **Անտոնի** և **Կրոնիդեսի** (4-րդ դ.) շիրիմները, ինչպես նաև՝ «**Յոթ խոտաձարակաց**» նահատակների մատուռ-ուխտատեղին: **Սուրբ Կարապետի** շրջակայքը հարուստ էր իր բարեհամ, սրբացված և բուժիչ հատկություններով օժտված աղբյուրներով (որպես կանոն կոչվել են **Լուսաղբյուր**, կից՝ բազմաթիվ նվիրական ծառերով և պուրակներով): Դրանց մեջ, որպես Հայոց մեջ պահպանված ջրի պաշտամունքի լավագույն վկայություն, անվանի էին հնագույն **Իննակնյան** «աղբերակունքը», **Քարեհամ** («Քարիհամ»), **Լուսավորչի** և **Սպիտակ** աղբյուրները:

Ի դեպ, **Սուրբ Կարապետը** հարգի էր նաև ասորիների մոտ, որոնց ուխտատեղին **Սուրբ Աստվածածին** եկեղեցու վկայարանն էր: Խոշոր ուխտավայր էր նաև Հավատամք լեռը (2535 մ), ուր ուխտավորները հետիոտն բարձրանալով՝ արտասանում էին քրիստոնեական հռչակավոր Հավատո հանգանակը, որը ժողովրդի շրջանում հայտնի էր որպես «Հավատամք»:

Վանքը հայ դպրության խոշոր կենտրոն էր: Ժամանակին այստեղ եղել է հարուստ մատենադարան, իսկ ձեռագրերի թիվը 18-19-րդ դդ. հաշվվում էր «40 մարդահասակ»՝ հսկա սնդուկներով: Ցավոք, **Սուրբ Կարապետը** ևս զերծ չի մնացել քրդական ավազակաբարո ցեղերի ասպատակություններից և կողոպուտից: Հատկապես աղետալի էին ռուս-թուրքական 1828-1829 թթ. պատերազմի ընթացքում քրդական վայրագությունների հետևանքները, երբ վանքը հիմնովին կողոպուտվել և, անգամ, երկար ժամանակ ամայացել էր: Պարբերաբար տեղ գտած նմանատիպ դեպքերը, նաև՝ հրդեհներն ու բնական աղետները (օր.՝ երկրաշարժերը) էական վնասներ են հասցրել տեղի մատենադարանին: Մեծ եղեռնի նախօրյակին **Սուրբ Կարապետի** ձեռագրերի թիվը մի փոքր էր միայն գերազանցում 200-ը:

Մենաստանն ունեցել է նաև մեծ և հարուստ թեմ: Վերջինս ընդգրկում էր **Արածանի-Մուրատից** և **Մեղրագետից** հյուսիս՝ մինչև **Քարբե-Հավատամք-Սեղանսար** լեռնագոտիները սփռված Սշո գավառի տասնյակ բնակավայրեր, ինչպես նաև **Քուլանուխ**, **Խնուս** (**Գյոքսու** գյուղախմբի հետ միասին), **Ճապաղջուր** և **Վարդո** գավառները: 19-րդ դ. **Սուրբ Կարապետին** էին ենթարկվում նաև **Թաքմանը** կամ **Թեքմանը** (1829-1830 թթ. արևմտահայերի մեծ գաղթի հետևանքով ամբողջովին հայաթափվեց) և **Կեղի-Քղին** (վերջին 2-ը՝ Էրզրումի նահանգի կազմում էին. տես անդ): Որոշ տվյալներով, 19-րդ դ. 60-ական թթ. **Սբ Կարապետի** թեմի մեջ մտնում էին 180 գյուղ և ավան: Վանքին էին պատկանում նաև մերձակա **Վերին** և **Ներքին Փակա(հ)** բնակելի ագարակները, ինչպես նաև վարչականորեն՝ **Գենջի** կազմի մեջ մտնող **Կվարս** (պատմ. **Կուառս**) գյուղին կից **Վերին Գյումրեթի** (**Գյումրեթներ**) մակաղատեղին, ուր պահվում էին **Սուրբ Կարապետի** ոչխարի հոտերը:

19-րդ դ. 2-րդ կեսին **Սուրբ Կարապետի** վանահայրությունը ստանձնել են հայ եկեղեցու և մշակույթի այնպիսի երախտավորներ, ինչպիսիք են **Մկրտիչ Խրիմյանը** (**Խրիմյան Հայրիկ**), **Գարեգին** եպիսկոպոս **Սրվանձտյանցը** (միաժամանակ՝ **Տարոնի թեմի** առաջնորդն էր), **Բաբգեն** եպս **Կյուլեներյանը** (Մեծ Եղեռնից հետո՝ **Մեծի Տանն Կիլիկիո** կաթողիկոսության արժույթից հայրապետ), **Ներսես** եպս **Խարախանյանը** (1893-1915 թթ.՝ Տարոնի թեմի առաջնորդ): Վանքը հատկապես վերելք է ապրել **Գ. Սրվանձտյանցի** օրոք, ում ջանքերով և **Մ. Խրիմյանի** եռանդուն աջակցությամբ, այստեղ դեռ 1863 թ. հիմնվել է տպագրատուն, հրատարակվել «**Արծուիկ Տարօնոյ**» պարբերականը: Ցավոք, վերջինս լույս տեսավ մինչև 1865 թ.: Սուրբ Կարապետում 19-րդ դ. սկզբից գործել է **Ժառանգավորաց դպրոցը**, որի համար նոր շենք է հիմնվել 1875-1876 թթ.՝ վանահայր **Մամբրե** եպս **Մամիկոնյանի** կողմից: Այդ որբանոց-դպրոցում Մեծ Եղեռնի նախօրյակին ուսանում էր 55 աշակերտ:

Սբ Կարապետը բարբարոսաբար ոչնչացվեց 1915 թ. ամռանը: Նահատակված վանականների և աշակերտների շարքում էր նաև վանահայր **Վարդան** ծայրագույն վարդապետ **Հակոբյանը**, որը միաժամանակ նաև

Տարոնի թեմի առաջնորդական փոխանորդն էր (**Ն. Խարախանյանի** մահվանից հետո հասցրեց պաշտոնավարել միայն 3 ամիս՝ 1915 թ. ապրիլից մայիս): Մենաստանին հասցվեց ահռելի նյութական վնաս: Հնարավոր եղավ փրկել գույքի աննշան մասը, այն էլ միայն 1916 թ.՝ **Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի** կողմից **Մուշ** առաքված հանձնաժողովի ջանքերով: **Սուրբ Էջմիածին** տեղափոխվեցին ջարդարարների ուշադրությունից վրիպած **Սուրբ Կարապետի** խոշոր գաղտնարաններից մեկում հայտնաբերված զգալի թվով ձեռագիր մատյաններ: Ներկայումս Մաշտոցյան Մատենադարանում պահվող **Սուրբ Կարապետի** ձեռագիր մատյանների թիվը հասնում է 7 տասնյակի, որոնց շարքում է ԺԳ դարի հանձարեղ մանրանկարիչ **Թորոս Ռուլինին** վերագրվող և այժմ Մատենադարանում պահվող արծաթապատ կազմով **Ավետարանը**,՝ հայ մանրանկարչության հիրավի անգերազանցելի գոհարներից մեկը:

Ջարդարարների սերունդները չխնայեցին անգամ **Սուրբ Կարապետի** ավերակները: Դրանք, հետեղեռնյան մի քանի տասնամյակների ընթացքում որպես թիրախ օգտագործվելով՝ հետևողականորեն վերացվել են թուրքական բանակի կողմից: Պակասը լրացրել են Հայոց հինավուրց սրբավայրի վրա առաջացած քրդական խղճուկ գյուղի բնակիչները, որոնք իրենց տները, իսկ ավելի վատթար՝ գոմերն ու ախոռները կառուցելիս, օգտագործել են վանքի սրբատաշ քարերն ու հայերեն արձանագրություններով տապանաքարերը:

Ձ) Եղրդուտի Սուրբ Հովհաննես

Մուշ-Տարոնի 3-րդ նշանավոր վանքը գտնվում էր Մշո գավառի հարավարևմտյան մասում, քաղաքից 10-12 կմ արևմուտք՝ **Սիմսարի** հյուսիսային ստորոտից սկիզբ առնող և **Մեղրագետ** թափվող **Հինշինջուր** գետակի ակունքների մոտ: Կառուցված էր **Սասուն** տանող ճանապարհին ընկած **Չարելն** կամ **Չարելան** բարձունքի վրա՝ եղրդի մշտադալար ծառի պուրակներով (որտեղից՝ հիմնական անունը) շրջապատված գեղատեսիլ վայրում: Ավանդաբար սրբավայրը հիմնել է **Սուրբ Գրիգոր Լուսավորիչը** 312 թ.՝ այստեղ ամփոփելով **Սուրբ Հովհաննես Մկրտչի**, ինչպես նաև **Սուրբ Աթանագինեի** մատունքների մի մասը, որոնք առանձին մասնատուփերով մենաստանում պահվել են մինչև Մեծ եղեռն: Վանքը հայտնի էր նաև **Շիշ Յուղո** («Շիշ իւղոյն») և **Արծվաբեր Սուրբ Նշան**, ավելի սակավ՝ **Եղեգնի** անուններով: Վանական համալիրի մեջ, բացի Մայր տաճարից, մտնում էին **Սուրբ Ստեփաննոս** (գրեթե նույնությամբ կրկնում էր **Սուրբ Էջմիածինը**) և **Սուրբ Աստվածածին** կից եկեղեցիները, ինչպես նաև՝ **Սուրբ Գրիգոր** և **Սուրբ Սարգիս** մատուռները: Վանքում պահվում էր նաև «շիշ իւղոյն», որի մեջ լցված սրբազան նարդոսով ըստ ավանդության **Մարիամ Մագթաղենացին** օծել է **Հիսուսին**: Ավելի ուշ սրբությունը Տարոն բերելով՝ **Սուրբ Թադևոս Առաքյալն** այն ամփոփել էր եղրդի ծառի արմատների տակ, որը հայտնաբերվել և նորաստեղծ մենաստանում ի պահ էր տրվել **Սուրբ Գրիգոր Լուսավորչի** կողմից: Հատկանշական է, որ **Սուրբ Հովհաննեսի** դարպասի առջև մինչև Եղեռնի նախօրյակը պահպանվում էր ավանդաբար սուրբ շիշը ամփոփած ծեր եղրդին: Ի դեպ, Տարոնի մյուս մենաստանների պես, **Սուրբ Հովհաննեսը** հռչակված էր պաղորակ և սրբացված աղբյուր-

ներով, որոնցից նշանավոր էին **Սուրբ Գևորգի, Լուսավորչի** և **Քարակ** կամ **Քարական** աղբյուրները: Վանքը հայ գրչության հնագույն և խոշոր կենտրոն է եղել և ժամանակին ունեցել է հարուստ մատենադարան: Ցավոք, ինչպես հաճախ է պատահել մեր վանքերի հետ, գրչագրերի մեծագույն մասը ոչնչացվել կամ հափշտակվել է: Ցեղասպանության նախօրյակին այստեղ պահվում էին ընդամենը 3 տասնյակի հասնող մատյաններ, որոնց մեջ առանձնանում էր 12-րդ դ. **Սեբաստիայում** ընդօրինակված երկաթագիր մագաղաթյա **Ավետարանը**: Ի դեպ, 19-րդ դ. 60-ական թթ. **Սուրբ Հովհաննեսի** մատենադարանից **Երուսաղեմի Սրբոց Հակովբյանց** վանք են տեղափոխվել մի քանի հնագույն ընտիր մատյաններ՝ դրանով իսկ փրկվելով անխուսափելի ոչնչացումից: Առանձնակի արժեք ունեն 1445 թ. (Հայոց ՊՂԴ) **Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Ժ Մակվեցու (Ջալալբեկյանց, 1443-1465)** կողմից շնորհված վանական կոնդակը, ուր մանրամասնորեն նշված են **Սուրբ Հովհաննեսի** թեմի սահմաններն ու հարկատու բնակավայրերը: Այս առումով հարկ է նշել, որ ընդհուպ մինչև Ցեղասպանություն Սուրբ Հովհաննեսն Արևմտյան Հայաստանի առավել ընդարձակ վանական թեմ ունեցող մենաստաններից մեկն էր: Այն ընդգրկում էր **Արածանուց** հարավ՝ մինչև Հայկական Տավրոս սիռոված Սշո գավառի **Խանդրեզ** գյուղախմբի 15 գյուղեր, **Գենջի** մի մասը (**Մանաշքուր** գյուղախումբը), **Սասունի** արևմտյան **Խիանք, Խուլփ (<Կողբ), Գազկե** կամ **Հավեղան** գավառակները, ինչպես նաև՝ **Դիարբեքի**րի նահանգի կազմում գտնվող **Լրձե, Հազրո-Ջորկան, Հայնի, Միհրանի (Թարջի), Սլիվան (Սիվան)** գավառների և գյուղախմբերի 100-ի հասնող բնակավայրեր, այդ թվում՝ քաղաքային: Հարկ է նշել, որ տարբեր ժամանակներում վանքի թեմի մեջ են եղել նաև **Տիգրիսից** հարավ տարածվող պատմական **Հայոց Միջագետքի** առանձին շրջաններ՝ **Դերիկը, Դարան,** իսկ 15-րդ դ. կեսերին, ինչպես նշված է 1445 թ. կոնդակում, հեռավոր **Ծոփքի Աշուշատ (<Արշամաշատ)** գավառակի որոշ գյուղեր:

Դեռ միջնադարում **Սուրբ Հովհաննեսը** նշանավոր կրթական կենտրոն է եղել, ուր գործել է բարձր տիպի երաժշտական դպրոց: 1870 թ. հիմնվել է նոր դպրոց, ուր Մեծ եղեռնի նախօրեին ուսանում էին 40-ի մոտ աշակերտներ: Վանքից մի փոքր հարավ՝ **Սասունի** սահմանագլխին, երևում էին **Մամկավանքի (Մամկունյաց կամ Մամիկունյանց վանք)** ավերակները, ուր պահպանվել էին նաև խիստ վնասված խաչքարերի մնացորդներ:

1915 թ. **Սուրբ Հովհաննեսի** միաբանները՝ վանահայր **Մկրտիչ** վարդապետ **Գասպարյանի** հետ, ինչպես նաև աշակերտները և վանքի մշակները, զոհ գնացին տարոնահայության վայրագ նախճիրին: Մենաստանը հիմնիվեր կործանվեց, իսկ նրանում պահվող գանձերը, ներառյալ՝ ձեռագրերն ու նշանավոր կոնդակը, բարբարոսաբար ոչնչացվեցին:

HISTORICAL AND DEMOGRAPHIC IMAGE OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE
Part five: the province Mush of Bitlis' Vilayet

Gegham M. Badalyan

Keywords – Taron, the city of Mush, Chhur-Chukhur, Ziaret-Handrez, Aghdzhan-Kosur, St. Karapet, Srbots Arakelots monastery, surb Hovhannes monastery in Egrdute, Havatamq Mountains, Serokov Mountains, Seghansar, Baghlu melikate.

A serie dedicated to Bitlis is going to begin with this article about Mush city and Mush province, which was the most densely populated by Armenians vilayet in Western Armenia. Mush Province was one of the most populated provinces of Western Armenia. On the eve of the Armenian Genocide, their number was greater than 95,000 (including the city of Mush). It was about 37% of all Armenians of Bitlis Vilayet, and 68% of the provincial population. Moreover, without taking into account the population, the Armenians were to ¾ of Mush province. In this respect, Mush was also one of the most populated provinces of Western Armenia. Armenians have been distributed in 111 rural settlements of the province, in 33 of which the population was more than 1000 people. While in Ahdzhan, Avran, Ziaret and Vardenis there were from about 2000 to 3000 people, and in Norshen and Tsronk – 4000 Armenian residents. Even more Armenians were in Hasgegh (5,000 inhabitants), which was, one might say, the largest rural settlement in Western Armenia. The article also separately presented the city of Mush, Taron's 3 famous monastery – Saint-Karapet, Saint-Apostolic, and Saint Hovhannes of Eghrdut. The article also referred to the Upper Chkhur that was the eastern part of the historic Taron and by administrative division subordinated to the governor of Bitlis. The article also referred to the Armenian semi-independent melikate Baghlu, which survived until the 40s of the 19th century.

Ը (ԺԳ) ԳԱՐԻԻ ԹԻՒԼ 2 (54) ԱՄՍԻԿԻ-ԽԱՆԻԿԱ, 2016

ՎԼԿ ԽԱՄԱՆԽԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՐԵԿԱ

**ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКИЙ ОБЛИК ЗАПАДНОЙ АРМЕНИИ
НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН**

Часть пятая: Мушский уезд Битлисского вилайета

Гегам М. Бадалян

Ключевые слова – Тарон, город Муш, Чхур-Чухур, Зиарет-Хандрез, Агджан-Косур, Святой Карапет, Святая Апостольская церковь, церковь святого Иоанна в Егрдуте, Горы верования, горы Серокова, Сегансар, меликство Баглу.

Статьей о городе Муш и Мушском уезде начинается серия посвященная Битлису, самому густонаселенному армянами вилайету в Западной Армении. Мушский уезд являлся одним из самых густонаселенных регионов Западной Армении. Накануне Геноцида армян их численность там превышала 95000 человек (включая город Муш). Это составляло около 37% всех армян вилайета Битлис и 68% населения провинции. Более того, без учета населения, армяне составляли до $\frac{3}{4}$ Мушского уезда. В этом отношении Муш был также одним из самых заселенных уездов Западной Армении. Армяне были распределены в 111 сельских населенных пунктах уезда, в 33-х из которых население превышало 1000 человек. Притом в Ахджане, Авране, Зиарете и Варденисе было от 2000 до 3000, а в Норшене и Цронке – до 4000 армянских жителей. Еще больше армян было в Хасгехе (до 5000 жителей), который, можно сказать, был самым крупным сельским поселением в Западной Армении.

В статье также отдельно представлены город Муш, 3 прославленных монастыри Тарона – Сурб Карапет, Сурб Аракелоц (Святых Апостолов) и Сурб Ованнес или Ехрдутский монастырь. В статье также упоминается Верхний Чухур, который являлся крайней восточной частью исторического Тарона и по административному делению подчинялся губернатору Битлиса. В статье упоминается также армянское полунезависимое меликство Баглу, которое сохранило свое существование до 40-ых годов 19-го века.